2024, ՄԱՅԻՍ Բ, ԹԻՎ 10 (654)

Բյուզանդիոն Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ուղերձը Հանրապետության տոնի առիթով

Համայն հայության հոգևոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Մեր օրհնությունն ու բարեմաղթանքներն ենք հղում աշխարհասփյուռ մեր ժողովրդին՝ Հանրապետության տոնի առիթով:

Մայիսյան հերոսամարտերի պատմական իրադարձությունները անկյունաքարային նշանակություն ունեցան հայոց պետականության վերականգնման՝ Հայաստանի Առաջին Հանրապետության ստեղծման և մեր ազգային կյանքի վերազարթոնքի գործում: Հայոց ցեղասպանության սոսկալի ողբերգությունը վերապրած մեր ժողովուրդը կենաց ու մահու պայքարի ելավ և կերտեց իր փառապանծ հաղթանակները:

Այս օրերին, երբ անվտանգային լրջագույն սպառնալիքների և գոյաբանական հիմնախնդիրների առջև ենք, հրամայական է, որ միասնական, աննկուն ու հաստատակամ լինենք՝ ընդդեմ մեր ազգային կյանքը փոթորկող ներքին և արտաքին մարտահրավերների:

Սիրելինե՛ր, Հանրապետության տոնի առիթով Հայրապետիս մաղթանքն է, որ հանուն հայրենական մեր կյանքում խաղաղության հաստատման և արժանապատիվ գոյընթացի, նպատակասլաց հանձնառությամբ և առ հայրենին սիրով ձեռնամուխ լինենք մեզ պատուհասած աղետների ու փորձությունների հաղթահարմանը և հզոր ու անվտանգ մեր պետության կերտմանը: Վանենք մեզանից կործանարար անտարբերությունը, փարատենք թշնամության ու ատելության մթնոլորտը, որպեսզի միասնականության հուսառատ ու զորեղ ոգով հաստատենք մեր կյանքում ապահովություն և խաղաղություն:

Աղոթում ենք, որ երկնավոր Տերը պահապան և օգնական լինի մեր ժողովրդին՝ ամուր պահելու աստվածապարգև մեր ազատությունն ու անկախ պետականությունը և համազգային ներուժով շեն ու բարօր դարձնելու մեր նվիրական հայրենիքը:

Գերագույն հոգևոր խորհրդի ժողով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում

Մայիսի 27-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, նախագահությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ Գերագույն հոգևոր խորհրդի ժողով: Ժողովը հանդես եկավ հայտարարությամբ:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Երկրում ստեղծված ճգնաժամի խորացման պատճառով այս օրերին իրենց խաղաղ բողոքն արտահայտող քաղաքացիների նկատմամբ ոստիկանները կիրառում են ակնհայտ անհամաչափ ուժ՝ բռնությունների դատապարտելի դրսևորումներով: Հասարակական կարգի պահպանությանը կոչված ծառայողների նմանօրինակ գործողությունները խորացնում են ներհասարակական լարվածությունը և կարող են հանգեցնել անկանխատեսելի հետևանքների:

Մեր կոչն է ոստիկաններին՝ իրենց պարտականությունների կատարման ընթացքում հարգել հայրենակիցների հիմնարար իրավունքները, ազատությունները, պատիվն ու արժանապատվությունը և գործել միմիայն մարդասիրության և օրինականության սկզբունքների խստագույն պահպանությամբ:

Մեր հորդորն է նաև հանրային գործողությունների մասնակիցներին իրենց բողոքն արտահայտել բացառապես օրենքի շրջանակներում, առաջնորդվել զգոնությամբ և չտրվել հնարավոր սադրանքների:

Միաժամանակ պատգամում ենք Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու զավակներին և մեր բոլոր հայրենակիցներին՝ այս բարդ իրադրության մեջ դրսևորել պատասխանատվություն և ամենայն ջանք գործադրել՝ ի խնդիր հայրենիքի առջև ծառացած գոյաբանական մարտահրավերների հաղթահարման, հայոց պետականության անխաթար պահպանության և ամրապնդման:

Թող ամենազոր Աստված օրհնի և խաղաղություն պարգևի մեր հայրենիքին, համերաշխություն և հուսառատ կյանք՝ մեր ժողովրդին:

Հայաստանյան եպիսկոպոսների և թեմական առաջնորդների ժողով Մայր Աթոռում

Մայիսի 23-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, նախագահությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ հայաստանյան եպիսկոպոսների և թեմական առաջնորդների ժողով:

Ժողովի օրակարգում ընդգրկված նյութերը վերաբերում էին հայրենիքի առջև ծառացած մարտահրավերներին, հասարակությանը հուզող հիմնախնդիրներին և եկեղեցու առաքելությանն առնչված հարցերին:

Անդրադարձ կատարվեց նաև վերջին օրերին ՀՀ իշխանությունների կողմից Հայ Եկեղեցու հասցեին բարձրաձայնվող մեղադրանքներին, որոնց առիթով ժողովը հանդես եկավ հայտարարությամբ:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ իշխանության տարբեր ներկայացուցիչներ, այդ թվում և վարչապետը, Տավուշում սահմանազատման ու սահմանագծման անվան ներքո կատարվող տարածքային միակողմանի զիջումների դեմ հանրային ընդվզման այս օրերին վերստին սկսել են թիրախավորել Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին՝ հրապարակ նետելով տարատեսակ կեղծ հայտարարություններ և ճշմարտազուրկ տեսություններ՝ առնչված Եկեղեցու պատմական առաքելությանն ու ներկա գործունեությանը:

Առավել քան զարմանալի է, որ մերկապարանոց մեղադրանքներ են հնչեցվում Եկեղեցու կողմից հարկեր չվճարելու առնչությամբ, երբ պաշտոնական վիճակագրություններն ուղղակի փաստում են ՀՀ օրենքով սահմանված հարկային պարտավորությունների կատարման մասին: Հատկապես դատապարտելի է, երբ կառավարության ղեկավարը անհիմն մեղադրումներով և անսքող դիտավորությամբ Հայ Եկեղեցուն ամբաստանում է ինչպես անցյալում, այնպես և այսօր «ազդեցության գործակալ» լինելու մեջ:

Ցավ ենք արտահայտում, որ գործող իշխանությունները Եկեղեցի–պետություն հարաբերություններում առկա խնդիրներն արծարծում են անվայելուչ իրենց հանգամանքին, նաև սպառնալիքների, ճնշումների և ապատեղեկատվության գործիքակազմերի օգտագործմամբ: Հարկ է, որ ՀՀ իշխանության ներկայացուցիչները ազգի և հայրենիքի առջև իրենց պատասխանատվության գիտակցությամբ անդրադառնան Եկեղեցու պատմական հայրենաշեն ու ազգապահպան դերակատարությանը, ինչն ամրագրված է նաև ՀՀ Սահմանադրությամբ, և վերատեսության ենթարկեն որդեգրած քաղաքականությունը: Աղոթում ենք, որ Աստված խաղաղություն պարգևի մեր հայրենիքին, բարօրություն ու ապահովություն մեր ժողովրդին:

Հայրապետի և հոգևոր դասի՝ Սարդարապատի հուշահամալիր մուտքն արգելափակող ՀՀ ոստիկանության ապօրինի գործողությունների առիթով

Խստորեն դատապարտում ենք ս. թ. մայիսի 28-ին Սարդարապատում տեղի ունեցած անթույլատրելի միջադեպը, ինչը, ցավոք, հերթական անգամ իրավականորեն և բարոյապես խայտառակեց Հայաստանի Հանրապետությունը: Դա քաղաքական քինախնդրությունից այն կողմ պաշտոնական նպատակաուղղված հարձակում էր ազգային ինքնության և արժեքաբանության 1700-ամյա կառույցի դեմ: Ակնհայտ է՝ ով է այդ արգահատելի և նսեմագույն հրահանգն արձակողը, որը բումերանգի արդյունք ունեցավ հենց իր՝ իշխանության, մանավանդ ուժային հայտնի կառույցի համար, քանի որ վերջինս արժանապատվությունից ցածր կամակատարություն դրսևորեց՝ Հայոց Եկեղեցու Գահակալի դեմ ծրագրված հանցանքն իրագործելով:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կողմից պետական արարողակարգի պատասխանատուին իրազեկվել էր Սուրբ Պատարագի և Հանրապետության համար մատուցվող մաղթանքի ավարտին Վեհափառ Հայրապետի՝ Սարդարապատի հուշահամալիր այցի ժամի մասին, հետևաբար՝ տեղի ունեցածը ՀՀ օրվա քաղաքական իշխանության կողմից ծրագրված անհանդուրժելի հանցանք է, պետական գործչին անվայել և անբարո կեցվածք:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի և ուղեկցող հոգևորականների հանդեպ ոստիկանների անարժանապատիվ գործողությունների կապակցությամբ ՀՀ վարչապետի և իշխանական որոշ պաշտոնյաների մեկնաբանությունները կառավարության ղեկավարին և «պետական այրին» պատշաճ պատասխաններ չեն և չեն դիմանում որևէ քննության: Ո՛չ մի դատապարտողական և մեղայական խոսք, այլ կեղծ ու անհեթեթ հիմնավորում և իրողության ու կատարվածի խեղաթյուրում: Վեհափառ Հայրապետին պաշտոնական մակարդակով սադրանքի վերագրումը նպատակ ունի Եկեղեցին թիրախավորելու և քաղաքական միտումներ իրագործելու: Հիշեցնենք, որ պետական արարողակարգի մասին օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Ամենայն Հայոց Վեհափառն ինքնուրույնաբար է որոշում իր մասնակցությունը, և որևէ հրավեր կամ թույլտվություն չի կարող պահանջվել Վեհափառի մասնակցության պարագայում, և Վեհափառն իր՝ վարչապետի նկատմամբ ունի ավագություն: Հետևաբար՝ ոստիկանության գործողություններն ամբողջությամբ անօրինական են, քրեական օրենսգրքի հատուկ հոդվածով՝ դատապարտելի:

Բագրատ սրբազանի առաջնորդած «Տավուշը հանուն հայրենիքի» շարժման հետ միջադեպի պատճառահետևանքային առնչությամբ՝ ՀՀ վարչապետի տխրահռչակ մեկնաբանությունը ևս որևէ ողջամիտ դատողությունից դուրս է: Բացի այդ՝ Սրբազան պայքարը միակողմանի զիջումներով կեղծ «խաղաղության դարաշրջան» կերտելու, Հայաստանի իշխանության պարտվողական, աղետաբեր քաղաքականության դեմ է՝ անվտանգային նոր մարտահրավերներին ընդառաջ, և արժեքաբանական առումով միանգամայն հակադարձ բևեռների երևույթներ են արդարացի պայքարն ու վերոնշյալ խորշելի միջադեպը:

Ամենակարևորը՝ միջադեպը Հայ Առաքելական Եկեղեցու նկատմամբ հետևողական քաղաքականության հերթական դրսևորումն է, այս անգամ՝ մեր պատմության խորհրդանշական տոնին՝ մայիսի 28-ին: Սարդարապատը հայ ժողովրդի վերազարթոնքի և լինելության վերահաստատման, մեր ազգային միասնության ու ճակատագրական հաղթանակի խորհրդանիշն է: Մայր Աթոռը և հայ հոգևորականությունը վճռորոշ դեր են խաղացել կենաց ու մահու կռիվ տալու և պետականությունը վերականգնելու արժանապատիվ գործում: Նվիրական այդ օրը փորձելով բախում հրահրել և արգելել Ամենայն Հայոց Կաթողիկոսի թափորը Սարդարապատի հուշահամալիր՝ ՀՀ կառավարության ղեկավարը փորձեց նաև անարգել օրվա հոգևոր-եկեղեցական խորհուրդը՝ սրբավայրում հայ նահատակների հիշատակը ոգեկոչելու և վասն հայրենյաց անկախության պահպանման աղոթք վերառաքելու:

Մայր Աթոռը, ինչպես միշտ, դրսևորեց պետականամետ կեցվածք և բարձր գիտակցություն՝ թույլ չտալով բախում, սթափություն հորդորելով, և ոստիկանական պատնեշը ճեղքելով՝ այնուամենայնիվ կատարեց իր հոգևոր առաքելությունը՝ աղոթքի ձայները դիտավորյալ խլացնող ոստիկանական հրահանգների ներքո: Իսկ թե ինչու անարգաբար փորձ արվեց կասեցնել աղոթական պահը՝ զոհերի հիշատակի և հայրենիքի անվտանգության համար, թողնում ենք ընթերցողի տրամաբանությանը:

Եկեղեցու՝ ցայժմ հնչող դաստիարակչական հորդորներն ու կոչերը «անառակ զավակներին» դարձի բերելու ուղղությամբ այլևս անօգուտ են, երկիրն արնաքամվում, չքանում է անդառնալիորեն: Իրեն անընդհատ Պապ թագավորի հետ համեմատող ՀՀ կառավարության ղեկավարը, ցավոք, չի հասնի ինքնաճանաչողության, չի գիտակցի, որ որպես պետական գործիչ՝ ինքը, դժբախտաբար, շատ հեռու է Պապ թագավորից, որովհետև Պապի օրոք Հայաստանը կարճ ժամանակամիջոցում վերականգնեց իր տարածքային ամբողջականությունը, Պապը ստեղծեց հզոր և մեծաթիվ բանակ, երկու աշխարհակալ տերություններից փորձեց անկախանալ ազդեցության առումով և զոհ դարձավ Հայաստանի անկախացման ճանապարհին: Պապ թագավորի առաքելությունը նսեմացվում և անարգվում է քննության չդիմացող այդ նույնացումով, քանի որ այսօր Հայաստանն ունենում է տարածքային մեծ կորուստներ, հազարավոր զոհեր ու բռնագաղթվածներ, մեր պետականությանը հասցվել է ողնաշարային ջարդվածք, ընկճվել է ժողովրդի դիմադրողական ոգին: Ինչ վերաբերում է Եկեղեցու իրավունքների կրճատման երևակայական զուգահեռին, ապա 4-րդ դարի և այսօրվա Եկեղեցու իրավունքները բոլորովին անբաղդատելի են:

Հայ Առաքելական Եկեղեցին սկզբունքային և կամային կեցվածք է դրսևորում այս ամբողջ ընթացքում, մարդասիրաբար զգոնության և ողջախոհության կոչեր հղում:

Այսքանից հետո դառնանք հիմնական հարցին՝ որո՞նք են ՀՀ իշխանության՝ Եկեղեցու նկատմամբ քաղաքականության բուն պատճառները:

ՀՀ քաղաքական իշխանությունը, օտար և թշնամի պետությունների ազդեցության ցանցում զոհելով Հայաստանի շահերը, բացահայտ դրսևորում է նաև աղանդավորական կեցվածք՝ կազմաքանդելով ինչ որ ազգային է, սև ու սպիտակի բևեռացումներով բաժանումներ կատարելով ժողովրդի մեջ, ինքնաստվածացումով և այլն: Աշխարհաքաղաքացիության, անկրոնականության, ապազգայնության իրավիճակ թելադրելով՝ իշխանությունը նպատակ է հետապնդում քաղաքական դավադրության իրագործումը: Նպատակաուղղված քաոսային իրավիճակ է ստեղծվում, ժողովրդին օտարում են ավանդական արժեհամակարգից, ազգային դեմք ու դիմագծից, որ հեշտ կառավարելի լինի: Իսկ Եկեղեցին ազգային ամենամուր և անհաղթահարելի պատնեշն է այդ ճանապարհին, հետևաբար՝ Եկեղեցու դեմ քաղաքական գործընթացում կիրառվում են նաև աղանդավորական գրոհներ ու մոտեցումներ: Ասվածը համառոտ հիմնավորենք որոշակի փաստարկներով:

Եկեղեցու պատարագներին, անգամ Հայրապետական պատարագներին ոչ մի իշխանական պաշտոնյա չի մասնակցում: Հիշեցնենք՝ աղանդավորները չեն ընդունում Եկեղեցին և իրենց հավաքավայրերն են կոչում եկեղեցի: Կա ինքնաստվածացման դրսևորում ՀՀ վարչապետի կողմից՝ Քրիստոսի հետ ինքնանույնացումով կամ ինքնահամեմատականով: Տարատեսակ աղանդների կողմից ևս՝ Եհովայի վկաներ, հոգեգալստականներ և այլն, քարոզվում է այն թեզը, թե իրենց հալածում են, բայց իրենց միջոցով իրականանում է Քրիստոսի խոսքը. «Երանի՛ է ձեզ, երբ ձեզ նախատեն ու հալածեն» (Մատթ. 5.11):

ՀՀ քաղաքական իշխանությունը ժողովրդին հետևողականորեն ենթարկում է գաղափարական վերամշակման՝ կտրելով ազգային, ընտանեկան և ընկերական արժեքներից՝ հայրենիք, եկեղեցի, բանակ, դպրոց, ընտանիք, մշակույթ՝ ձևավորելով նոր արժեհամակարգ, որում կան միայն սև ու սպիտակ գույներ: Ընդ որում՝ սևը իրենց գաղափարները մերժողներն են, սպիտակը՝ իրենց հետևորդներն ու համակրողները: Սև ու սպիտակի բաժանումը բնորոշ է, օրինակ, Եհովայի վկաներին, որոնք սև՝ սատանայի աշխարհում տեղավորում են իրենց գաղափարական հակառակորդներին՝ ազգային, ավանդական, ընտանեկան արժեքաբանությունը կրողներին: Ընդգծենք՝ Եհովայի վկաները, չընդունելով «հայրենիք» հասկացությունը և մերժելով բոլոր պետական կառույցները, դեմ են նաև բանակին և զինվորական ծառայությանը:

Միով բանիվ, աղանդները Հայաստանում նպատակ ունեն կործանել մեր ազգային հավատքը, ջլատել մեր միասնությունը և պետությունը խարխլել, ինչը և հետևողականորեն կատարվում է վերջին տարիներին:

Հայ Եկեղեցին գործնականում մնացել է ազգային միակ ինստիտուտը, որ չի կարողացել խարխլել գործող իշխանությունը: Բանակը կեղծ բարեփոխումների և պատերազմի հետևանքով տուժել է, սահմանադրությունը՝ ըստ ուզածի վերաձևվել, պետական հաստատություններ՝ ըստ էության կազմաքանդվել, կրթական համակարգը՝ աղճատվել, հայրենական հողերը՝ բռնազավթվել, Հայոց ցեղասպանության պահանջատիրությունը՝ կասկածի տակ դրվել և այլն:

Կրկնում ենք՝ Սարդարապատի հուշահամալիրի միջադեպը ՀՀ իշխանության քաղաքական-աղանդավորական ուղեգծի դրսևորումներից մեկն է միայն, այդ քաղաքականությունը հետևողականորեն իրագործվում է՝ 2018 թվականից սկսված: Ապացույցը՝ 2018 թ. հուլիսի 14-ին մի խումբ մարդկանց կողմից Վայոց Ձորում Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ Գնդեվանք ուխտագնացության արգելափակումը և հարձակումը Վեհափառ Հայրապետի վրա, այդ առնչությամբ քրեական գործ անգամ չհարուցելը: Այնուհետև՝ նույն նախաձեռնության անդամների կողմից օրեր շարունակ Վեհարանի զավթումը, «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի նկատմամբ իշխանական գրոհը և ի վերջո դպրոցական ծրագրից դուրս թողնելը՝ կրոնական ազատության իրավունքի և դասընթացի բովանդակության աննպատակահարմարության քողի տակ, պետական տոների արարողակարգերին Վեհափառ Հայրապետին չհրավիրելը, 2024 թ. Կաթողիկոսի ամանորյա ուղերձի հեռարձակման արգելափակումը Հայաստանի հանրային հեռուստաընկերությամբ և այլն:

Հայ Եկեղեցու հանդեպ այս սրբապղծությունն ունի նախադեպեր նաև ոչ վաղ անցյալում՝ բոլշևիկյան ապազգային ժամանակներում. փակվեցին եկեղեցիներ, ձերբակալվեցին ու գնդակահարվեցին հոգևորականներ, Խորեն Ա կաթողիկոս Մուրադբեկյանի դեմ խարդավանքներ նյութվեցին, հետո անհայտ հանգամանքներում սպանեցին: Աթեիզմի ժամանակներին այսօր փոխլրացնում են աղանդավորական ժամանակները, բայց քաղաքական նպատակը մեկն է՝ խլացնել ժողովրդի ազգային հիշողությունը, զրկել ազգային դեմք ու դիմագծից, հայրենատիրության զգացումից ու կամքից, ժխտել պատմական հայրենիքի գոյությունը, Հայոց ցեղասպանության փոխհատուցման պահանջատիրությունը՝ դարձնելով մանկուրտ կամ աշխարհաքաղաքացի:

Այսպիսով՝ աղանդավորությունը ևս քաղաքական ուղեգիծ է ՀՀ-ում, և իշխանությունը, ժողովրդավարական կեղծ քողեր փոխելով, փորձում է թաքցնել իր ինքնությունը, խոսելով պատմական պատասխանատվությունից ու քրիստոնյա վարքից՝ կատարում է ճիշտ հակառակը:

Վերջապես՝ Սարդարապատի միջադեպը անպատվություն է ազգային գիտակցություն ունեցող յուրաքանչյուր հայի համար:

Աստվածասեր իշխանություն Հայաստանին, որը կկասեցնի հայրենասպանության ու ազգասպանության այս ծանր գործընթացը…

Նարինե ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

Մայիսի 16-ին **Անվանի գիտնական, բարերար Նուբար Աֆեյանին**

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոս ընդունեց «Ապագա հայկականը» շարժման նախաձեռնող, «Ավրորա» մարդասիրական նախաձեռնության համահիմնադիր, անվանի գիտնական և ազգային բարերար տիար Նուբար Աֆեյանին:

Հանդիպմանը ներկա էր Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ Տ. Խաժակ արք. Պարսամյանը:

Նորին Սրբությունն իր ուրախությունը հայտնեց տիար Նուբար Աֆեյանի Հայաստան և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին այցի առիթով՝ բարձր գնահատելով Հայաստանին ու արցախահայությանը ցուցաբերվող շարունակական զորակցության և աջակցության համար:

Հանդիպմանն Ամենայն Հայոց Կաթողիկոսը և տիար Աֆեյանն անդրադարձ կատարեցին Հայաստանում տեղ գտած զարգացումներին, հայ ժողովրդի առջև ծառացած անվտանգային մարտահրավերներին, ինչպես նաև Արցախի բռնազավթման ու հայաթափման, արցախահայության արդար իրավունքների պաշտպանության, Արցախի պատանդառված ռազմաքաղաքական ղեկավարության ու ռազմագերիների ազատ արձակման և Արցախի հոգևոր-մշակութային ժառանգության պահպանության խնդիրներին:

Զրուցակիցներն անդրադարձան նաև Հայաստան–Սփյուռք կապին, Սփյուռքի առջև ծառացած մարտահրավերներին՝ կարևորելով հայրենիքի համար դժվարին այս ժամանակներում Սփյուռքի ներուժի արդյունավետ օգտագործմանն ուղղված ծրագրերը:

Մայիսի 21-ին **Հալլեի համալսարանի պատվիրակությանը**

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Գերմանիայի Հալլե քաղաքի Մարտին Լյութեր համալսարանի աստվածաբանության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական պատվիրակությանը և ուսանողներին՝ գլխավորությամբ Գերմանիայի Ավետարանական Եկեղեցու Արևելյան և Հարավային Եվրոպայի բաժանմունքի տնօրեն պրոֆեսոր Մարտին Իլլերթի:

Հանդիպմանը ներկա էին նաև Գերմանիայի հայոց թեմի առաջնորդ Տ. Սերովբե եպս. Իսախանյանը, Մայր Աթոռի վարչատնտեսական բաժնի տնօրեն Տ. Մուշեղ եպս. Բաբայանը և Գևորգյան հոգևոր ճեմարանի տեսուչ Տ. Շահե ծ. վրդ. Անանյանը:

Համալսարանի աստվածաբանության ֆակուլտետի դեկան դոկտոր, պրոֆեսոր Դանիել Ցյուրանկան Ամենայն Հայոց Կաթողիկոսին տեղեկացրեց, որ պատվիրակության այցի նպատակն է կրթական ոլորտում խորացնել համագործակցությունը ՀՀ բուհերի և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանի հետ:

Այնուհետև Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր օրհնությունը բերեց հյուրերին՝ բարձր գնահատելով կրթական ոլորտում նախանշվող ծրագրերն ու ձևավորվող գործակցությունը: Այս առիթով Նորին Սրբությունն ուրախությամբ ընդգծեց, որ Սուրբ Էջմիածնի միաբաններն իրենց բարձրագույն կրթությունը շարունակում են տարբեր երկրների աստվածաբանական նշանավոր համալսարաններում և քույր Եկեղեցիների հոգևոր ուսումնական հաստատություններում, ինչն էապես նպաստում է փոխճանաչողությանը և միջեկեղեցական կապերի առավել սերտացմանը: Ամենայն Հայոց Կաթողիկոսը նաև գոհունակություն հայտնեց Գերմանիայի հայոց թեմի և Գերմանիայում գործող քրիստոնեական տարբեր հարանվանությունների միջև առկա ջերմ փոխգործակցության առիթով: Վերջում Վեհափառ Հայրապետը պատասխանեց հյուրերի հարցերին, որոնք առնչվում էին Հայաստանի առջև ծառացած մարտահրավերներին, դրանց հաղթահարման ուղղությամբ Հայ Եկեղեցու գործադրած ջանքերին և Մայր Աթոռի կրթական հաստատությունների գործունեությանը:

Մայիսի 22-ին **Ֆրանսահայ պատվիրակությանը**

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՀՅԴ-ի բյուրոյի ներկայացուցիչ և Հայ դատի հանձնախմբերի կենտրոնական խորհրդի նախագահ Հակոբ Տեր-Խաչատուրյանին և Ֆրանսիայի հայկական կազմակերպությունների համակարգող խորհրդի համանախագահ, ՀՅԴ-ի բյուրոյի անդամ Մուրադ Փափազյանի գլխավորած պատվիրակությանը: Պատվիրակության կազմում էին նաև Ֆրանսիայի Սենատի պատգամավորներ:

Հանդիպման ընթացքում Նորին Սրբությունը և պատվիրակության անդամները քննարկեցին Հայաստանի ու հայ ժողովրդի առջև ծառացած մարտահրավեներին առնչվող հարցեր՝ կարևորելով հայրենական կյանքում ազգային միասնականությունն ու ջանքերի մեկտեղումը առկա խնդիրների հաղթահարման գործում:

Իր խոսքում Հայոց Հովվապետն անդրադարձ կատարեց Հայաստանի և արցախահայության իրավունքների պաշտպանության անհրաժեշտությանը և այդ ուղղությամբ Ֆրանսիայի իշխանությունների կողմից ներդրվող ջանքերին: Այս առիթով Նորին Սրբությունն իր գնահատանքը բերեց Ֆրանսիայի Սենատի պատգամավորներին՝ շարունակական զորակցության համար:

Վերջում Վեհափառ Հայրապետը պատասխանեց պատվիրակության անդամների հարցերին, որոնք վերաբերում էին Արցախի հոգևոր-մշակութային ժառանգության պահպանության և հայ ռազմագերիների վերադարձման գործում Մայր Աթոռի կողմից տարվող աշխատանքներին:

Վերապատրաստման դասընթացներին մասնակից եկեղեցականներին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց վերապատրաստման դասընթացներին մասնակցող Հայաստանի և Սփյուռքի տարբեր թեմերից ժամանած եկեղեցականներին:

Վեհափառ Հայրապետը, իր օրհնությունը փոխանցելով հոգևորականներին, ընդգծեց Մայր Աթոռում կազմակերպվող վերապատրաստման դասընթացների կարևորությունն իրենց հոգևոր սպասավորության առավել արդյունավորման գործում: Ամենայն Հայոց Հայրապետը հորդորեց եկեղեցականներին լավագույնս օգտվել այս հնարավորությունից և ամբարելով նոր գիտելիքներ, զորանալով միմյանց փորձառությամբ՝ առավել մեծ նախանձախնդրությամբ շարունակել իրենց հովվական ծառայությունը: Վերջում Նորին Սրբությունը պատասխանեց քահանաներին հուզող հարցերին, որոնք վերաբերում էին հովվական ծառայությանը և հայորդիների հոգևոր կյանքի կազմակերպմանը:

Մայիսի 28-ին **ՀՅԴ-ի Հայ դատի հանձնախմբերի ու գրասենյակների համահայկական խորհրդաժողովի մասնակիցներին**

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՀՅԴ-ի Հայ դատի հանձնախմբերի ու գրասենյակների համահայկական խորհրդաժողովի մասնակիցներին՝ առաջնորդությամբ ՀՅԴ-ի բյուրոյի ներկայացուցիչ և Հայ դատի հանձնախմբերի կենտրոնական խորհրդի նախագահ Հակոբ Տեր-Խաչատուրյանի: ՀՅԴ-ի բյուրոյի Հայ դատի քաղաքական հարցերի գրասենյակի ղեկավար Կիրո Մանոյանը, ներկայացնելով հյուրերին, Նորին Սրբությանը համապարփակ տեղեկություններ փոխանցեց խորհրդաժողովի կատարած աշխատանքների մասին:

Ողջունելով հյուրերին՝ Ամենայն Հայոց Հայրապետը կարևորեց խորհրդաժողովի աշխատանքները՝ ի խնդիր հայրենիքի և ազգի զավակների իրավունքների պաշտպանության: Նորին Սրբությունը մասնավոր անդրադարձ կատարեց հայրենիքի առջև ծառացած առկա խնդիրներին և դրանց հաղթահարման ուղղությամբ ջանքերի մեկտեղման անհրաժեշտությանը: Հատկապես կարևորվեցին Հայաստան–Սփյուռք կապերի սերտացումը և համազգային ներուժի ծառայեցումը հանուն հայրենիքի զորացման և ապահով կյանքի կերտման: Նորին Սրբությունն իր գնահատանքը հայտնեց ՀՅԴ-ի Հայ դատի գրասենյակին Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման ուղղությամբ գործադրվող ջանքերի, արցախահայերի արդար իրավունքների բարձրաձայնման ու հետապնդման և հայրենանվեր ու ազգօգուտ այլ իրագործումների համար: Վերջում Վեհափառ Հայրապետը պատասխանեց հյուրերի հարցերին, որոնք վերաբերում էին Արցախի հոգևոր-մշակութային ժառանգության պահպանության խնդիրներին, հայ ռազմագերիների վերադարձման գործում Մայր Աթոռի կողմից տարվող աշխատանքներին և միջեկեղեցական հարաբերություններին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը ցավակցագիր է հղել Իրանի հոգևոր առաջնորդին

Մայիսի 20-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը ցավակցական նամակ է հղել Իրանի Իսլամական հեղափոխության առաջնորդ Այաթոլլա Սեյեդ Ալի Հոսեյնի Խամենեիին՝ ուղղաթիռի վթարի հետևանքով Իրանի Իսլամական Հանրապետության նախագահ Սեյիդ Իբրահիմ Ռաիսիի, ԱԳ նախարար Հոսեյն Ամիր Աբդոլլահյանի և ուղեկցող պաշտոնատար անձանց ողբերգական մահվան կապակցությամբ:

Նորին Սրբությունը, հանուն Գերագույն հոգևոր խորհրդի և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանության, վշտակցություն է հայտնել զոհերի սգակիր ընտանիքներին և Իրանի ժողովրդին՝ հայցելով, որ Բարձրյալը զորավիգ լինի Իրանի Իսլամական Հանրապետությանը հաղթահարելու դժվարին փորձությունը:

Կատարվեց հոգեհանգիստ բնական աղետի հետևանքով զոհ գնացած հայորդիների համար

Մայիսի 27-ին, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ, Սուրբ Հովհաննես Մկրտիչ և Սուրբ Վարդան մատուռ-մկրտարանում կատարվեց հոգեհանգստյան կարգ Լոռու և Տավուշի մարզերում բնական աղետի հետևանքով զոհ գնացած հայորդիների համար:

Սուրբ Էջմիածնի միաբանությունը և ներկա հավատացյալ ժողովուրդն աղոթք բարձրացրին անմեղ զոհերի հոգիների հանգստության, ինչպես նաև աղետից տուժածների և վիրավորների շուտափույթ ապաքինման համար:

Տոնախմբություններ և հիշատակություններ Մայր Աթոռում

Տոնախմբվեց Սուրբ Հռիփսիմյանց կույսերի հիշատակը

Մայիսի 27-ին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին տոնախմբեց Սուրբ Հռիփսիմյանց կույսերի հիշատակը: Տոնական այդ օրը նաև Ս. Հռիփսիմե վանքի ուխտի օրն է, երբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Ս. Հռիփսիմե վանք է տարվում սրբուհու մասունքն ամփոփող Աջը:

Առավոտյան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից եկեղեցականների թափորը՝ հավատացյալների ուղեկցությամբ, Էջմիածնի հայորդյաց տան սաների թմբուկների զարկերի ներքո, շարժվեց դեպի Սուրբ Հռիփսիմե վանք՝ տանելով սուրբ Հռիփսիմեի մասունքները: Սուրբ Գրիգոր Լուսավորչի կամարի առջև Ամենայն Հայոց Հայրապետը, սրբազան Աջով օրհնելով հոգևոր դասին և ներկա բարեպաշտ ժողովրդին, այն փոխանցեց Մայր Աթոռի լուսարարապետի պաշտոնակատար Տ. Հարություն վրդ. Կիրակոսյանին: Սուրբ Հռիփսիմե վանքի առջև թափորը դիմավորեցին վանքի հոգևոր սպասավորները և տարբեր վայրերից ժամանած բազում ուխտավորներ՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վանորեից տեսուչ Տ. Արտակ եպս. Տիգրանյանի գլխավորությամբ: Տոնի առիթով վանքում մատուցվեց սուրբ և անմահ պատարագ: Պատարագիչն էր Մայր Աթոռի միաբան Տ. Ոսկան աբդ. Ոսկանյանը: Հայր սուրբը, անդրադառնալով օրվա խորհրդին, ի մասնավորի նշեց. «Ս. Հռիփսիմյանք չուրացան Քրիստոսին, երկնքի արքայությունը չփոխեցին թագավորական փառքի հետ՝ գերադասելով Տիրոջ սերն ու նահատակությունը: Սրբուհին իր օրինակով մեզ ցույց է տալիս, որ Քրիստոսին խաչակից լինելը ոչ թե դառնացնում է մեր կյանքը, այլ մեր կյանքի դառնություններն է քաղցրացնում և առաջնորդում է հաղթահարելու մեր կյանքի փորձությունները»: Իր քարոզի վերջում հայր Ոսկանը հորդորեց հավատավոր հայորդիներին Ս. Հռիփսիմյանց բարեխոսությամբ քաջալերվել ու չընկրկել փորձությունների առաջ և հավատարիմ մնալ Քրիստոսին:

Տոնախմբվեց Սուրբ Գայանյանց կույսերի հիշատակը

Մայիսի 28-ին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին տոնեց Սուրբ Գայանյանց կույսերի հիշատակը, որն այս տարի համընկել է Հանրապետության տոնին:

Մայիսի 27-ից հունիսի 2-ը Հայոց Եկեղեցին տոնախմբում է Արարատյան շաբաթը: Այն նշանավորվում է Հռիփսիմյանց և Գայանյանց կույսերի, Հովհաննես Կարապետի հիշատակությամբ, ինչպես նաև Լուսավորչի՝ վիրապից ելնելու և Կաթողիկե Սուրբ Էջմիածնի տոներով: Բերկրառատ տոնի առիթով առավոտյան Վեհափառ Հայրապետը մասունքակիր Աջը փոխանցեց Մայր Աթոռի Լուսարարապետի պաշտոնակատար Տ. Հարություն վրդ. Կիրակոսյանին:

Սուրբ Գայանե վանքի առջև թափորը դիմավորեցին Մայր Աթոռի վանորեից տեսուչ Տ. Արտակ եպս. Տիգրանյանը, վանքի հոգևոր սպասավորներն ու բազմաթիվ հավատավոր հայորդիներ:

Օրվա խորհրդի առիթով Սուրբ Գայանե վանքում մատուցվեց սուրբ և անմահ պատարագ: Պատարագիչն էր Սուրբ Գայանե վանքի վանահայր Տ. Մատթեոս վրդ. Պողոսյանը:

Իր քարոզում հայր սուրբը, անդրադառնալով Սուրբ Գայանյանց կույսերի կյանքին և նահատակության պատմությանը, ընդգծեց, որ նրանք իրենց անբասիր մաքրությամբ, անսասան հավատքով, առաքինի վարքով, քաջությամբ ու համարձակությամբ, առ Աստված տոգորված սիրով դարձան Տիրոջ երկնավոր արքայության ընտրյալները:

«Այսօր, սիրելինե՛ր, մայիսի 28-ն է՝ մեր պատմության հերոսական էջերից մեկը, և գեղեցիկ զուգադիպությամբ Գայանյանց կույսերի տոնը համընկել է Սարդարապատի հերոսամարտի հաղթական օրվա հետ: Այսօր էլ ծանր փորձությունների առաջ է կանգնած մեր երկիրը: Սակայն վստահ ենք, որ քրիստոնեական մեր տիրավանդ հավատքով, Տիրոջ զորակցությամբ հաղթահարելու ենք այս դժվարին ժամանակները ևս»,– ասաց հայր Մատթեոսը՝ հայցելով Սուրբ Գայանյանց և Հռիփսիմյանց բարեխոսությունը Եկեղեցու պայծառության, հայրենիքի խաղաղության ու ապահովության համար:

Սուրբ պատարագի ընթացքում, Հանրապետության տոնի առիթով, Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ կատարվեց Հանրապետական մաղթանք:

Եկեղեցականաց դասը ու ներկա ժողովուրդն աղոթք բարձրացրին առ Աստված Հայաստանի Հանրապետության անսասանության, խաղաղ, բարօր և անվտանգ կյանքի համար: Մաղթանքի ավարտին Նորին Սրբությունը Պահպանիչ աղոթքով և Ս. Գայանեի մասունքակիր Աջով օրհնեց հավատավոր հայորդիներին:



Սուրբ Հովհաննես Կարապետի մասունքը տարվել է Շողակաթ վանք



Մայիսի 30-ին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին նշեց Սուրբ Հովհաննես Կարապետի և Սուրբ Աթանագինե եպիսկոպոսի տոնը, որը նաև Էջմիածնի Սուրբ Շողակաթ վանքի ուխտի օրն է:

Սուրբ Հովհաննես Մկրտչի մասունքն ամփոփող խաչ-մասունքարանն առավոտյան Մայր Աթոռից Սուրբ Շողակաթ վանք տարվեց եկեղեցականների հանդիսավոր թափորով: Թափորը մինչև Սուրբ Գրիգոր Լուսավորչի կամար գլխավորեց Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ մեծագույն սրբի մասունքարանով օրհնելով բարեպաշտ ժողովրդին: Այնուհետև սրբազան մասունքը Նորին Սրբությունը փոխանցեց Մայր Աթոռի քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Տ. Զաքարիա ծ. վրդ. Բաղումյանին: Սուրբ Շողակաթ վանքի առջև թափորը դիմավորեցին բազմաթիվ ուխտավորներ՝ Մայր Աթոռի վանորեից տեսուչ Տ. Արտակ եպս. Տիգրանյանի գլխավորությամբ: Տոնի կապակցությամբ վանքում մատուցվեց սուրբ պատարագ: Պատարագիչն էր Շողակաթ վանքի վանահայր Տ. Արիս աբդ. Տոնոյանը: Սրբազան արարողության ավարտին Տ. Արտակ եպս. Տիգրանյանը Ս. Հովհաննես Մկրտչի մասունքակիր խաչով օրհնեց հավատացյալ ժողովրդին:

Լրատվական նյութերը՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
տեղեկատվական համակարգի

ՄԱՅԻՍ 28

«Հոգ չէ, թե կզոհվեմ հազարամյա տաճարի շեմին...»

Սուրբ Էջմիածնի և Կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանցի դերը 1918 թվականի մայիսին

Գևորգ Ե Սուրենյանց Ամենայն Հայոց Կաթողիկոսի անունը հայոց պատմության մեջ առաջին հերթին կապվում է 1918 թ. մայիսյան հերոսամարտերի հետ: Մինչ այդ և դրանից հետո էլ Վեհափառը ազգային օգտաշահ գործունեություն ծավալեց, սակայն հատկապես Սարդարապատը դարձավ նրա կենսագրության հատկորոշիչը: Ինչո՞ւ, որովհետև այդ ժամանակ, ինչպես այսօր, վճռվում էր հայ ժողովրդի և Հայաստանի լինելության հարցը, և Վեհափառ հայրապետն Էջմիածինը չլքելու իր անհողդողդ կեցվածքով, դիմադրության աննահանջ վճռականությամբ բեկում մտցրեց հայկական հուսալքված զորքերի շարքերում՝ սխրագործության առաջնորդելով հազարավորների: 1918 թ. մայիսյան կենաց ու մահու ճակատամարտերի արդյունքում վճռվեց մեր ազգային լինելության խնդիրը, ավելին՝ 600-ամյա կորստից հետո վերականգնվեց հայկական պետականությունը:

Ինչպիսի՞ն էր այդ ժամանակ իրավիճակը Հայաստանում, և ի՞նչ նշանակություն ունեցավ Ս. Էջմիածինը՝ ի դեմս Կաթողիկոսի և հոգևորականության:

Խախտելով 1917-ի դեկտեմբերի 5-ի Երզնկայի զինադադարը՝ Թուրքիան շուտով վերսկսեց ռազմական գործողությունները՝ գրավելով Կարինը, Կարսը, Սարիղամիշն ու Ալեքսանդրապոլը: Օսմանյան զորամասերը, անցնելով Ախուրյանն ու Արաքսը, գրոհեցին Ղարաքիլիսայի, Բաշ-Ապարանի և Սարդարապատի ուղղությամբ: Ներսից կռիվներ հրահրելով՝ թուրքական զորքերի առաջխաղացմանն օժանդակում էին Երևանի նահանգի մահմեդականները՝ թուրքերը, թաթարները, քրդերը: Արարատյան դաշտը 1918 թ. մայիսին շրջապատված էր թշնամիներով:

Ռուսաստանում 1917-ի փետրվարի հեղափոխության հետևանքով էր թուրքերի ներխուժումն Արարատյան դաշտ տեղի ունեցել՝ Նիկոլայ Երկրորդ ցարի գահընկեցության և բոլշևիկյան իշխանության քաղաքականության արդյունքում: Բոլշևիկյան կառավարության հրահանգով՝ ռուսական զորքերը լքեցին կովկասյան ռազմաճակատը՝ նաև Արևմտահայաստանը՝ թողնելով ռազմական վիթխարի պահեստներ: Արդեն 1918-ի հունվարի վերջերին կովկասյան ճակատը հիմնականում դատարկված էր ռուսական զորքերից: Այդ գործընթացը, բոլշևիկների պրոթուրքական քաղաքականությունը ընկճեցին հայկական զորքերի դիմադրողականությունը, բացի այդ՝ հայկական զորքերի շարքերը բարոյալքվում էին զանազան ապատեղեկություններով, որոնցից մեկն այն էր, թե առաջացող թուրք ասկյարն այլևս հայ ժողովրդի բարեկամն է, պետք չէ կրակել նրա վրա:

Կարսի բերդի պաշտպանության համար մոտ վեց հազար հայազգի զինվոր կար, բացի այդ՝ բերդի հրամանատար Դեևի տրամադրության տակ կային մոտ հազար միավոր հրանոթ և տարբեր տեսակի զենքեր, սակայն Կարսը հանձնվեց առանց դիմադրության, հազարավոր հայեր խուճապահար փախան դեպի Երևանի նահանգ, և ապրիլի 25-ին օսմանյան երրորդ բանակն առանց կռվի մտավ հայկական բերդաքաղաք: Թուրքական զորքերը կանգ չէին առնում՝ խախտելով պաշտոնական բոլոր պայմանավորվածությունները: Մայիսի 15-ին գրավվում է նաև Ալեքսանդրապոլը: Ալեքսանդրապոլի անկումից հետո հայկական զորքերի մի մասը կռիվներով նահանջում է Երևանի ուղղությամբ՝ մայիսի 19-ին հասնելով Սարդարապատ:

Երևանում համընդհանուր խուճապ էր, բոլոր ճանապարհները փակ էին, իրավիճակն անելանելի էր, դիմադրությունն անիմաստ էր թվում: Հայկական կորպուսի հրամանատարությունը հակված էր Երևանն առանց դիմադրության հանձնել թուրքերին և պաշտպանություն կազմակերպել Սևանա լճի ափին: Սակայն Երևանի նահանգի ղեկավարությունը՝ Արամ Մանուկյանի ու զորահրամանատար Դրաստամատ Կանայանի գլխավորությամբ, որոշում է թուրքերի առաջընթացն Արարատյան դաշտավայրում կանխել: Արամ Մանուկյանի դիմումը երևանցիներին շատ որոշակի էր. «Մենակ ենք ու պիտի ապավինենք միայն մեր ուժերին»:

Հայկական զորքերի երևանյան զորախմբի հրամանատար գեներալ Մովսես Սիլիկյանը, որ իր հրամանատարական կետը հաստատել էր Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանում, Երևանի ապագա պարետ Արշավիր Շահխաթունու ուղեկցությամբ մայիսի 19-ին ներկայանում է Կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանցին և նրան առաջարկում անվտանգության համար տեղափոխվել Բջնի, Բյուրական կամ Սևան: Կաթողիկոսը կտրականապես հրաժարվում է: Երկու օր անց՝ մայիսի 21-ին, Արամ Մանուկյանը, Շահխաթունին և Պողոս Բեկ-Փիրումյանն են Երևանից ժամանում Մայր Աթոռ և կրկին հորդորում Վեհափառին՝ նախ տեղափոխվել Երևան, ապա՝ Սևան:

➥ էջ 6

Տաթևի վանքը՝ պատմաքաղաքական իրադարձությունների կենտրոն

Պատմության ընթացքում Տաթևի վանքը եղել է ինչպես Սյունիքի հոգևոր-մշակութային, այնպես էլ քաղաքական կյանքի ականավոր կենտրոնը: Այսպես՝ Ղուկաս Սեբաստացին հաղորդում է, թե Դավիթ բեկը Սյունյաց աշխարհ հասավ Տիրոջ 1722, հայոց 1171 թվականին ու բանակեց Սիսական գավառի սահմաններում Դավիթն ինքը ազնվական էր, բարեպաշտ, արդարակորով, գրագետ, արիասիրտ, լայնախոհ, խոսքով ու գործով ուժեղ, ազգի բարօրության նախանձախնդիր և աններող՝ նրա թշնամիների հանդեպ: Իր նման էին և նրա բոլոր հետևորդները:

Դավիթը բանակում է Հայրաշեն կամ Շինուհայր կոչվող ամրոցում: Եվ իր մոտ կանչելով Տաթևի առաջնորդին՝ պատմեց նրան, թե ինչ գործով, ինչ նպատակով է եկել և ասում է՝ իսպառ ջնջելու ենք բոլոր թշնամիներին:

Այս ժամանակ Տաթևում մի մելիք կար ուրացող, որ առաջ կոչվում էր Դավիթ, բայց հետո, երբ հավատը փոխեց, ինքը և ամբողջ ընտանիքը, վերակոչվեց Բաղրի, և նրա որդիները դարձան շահողուլի: Սա երբ լսում է Դավթի գալը, Տաթևի տղամարդկանց հավաքում, ամրություններ է շինում և պատրաստվում է պատերազմել Դավթի դեմ:

Դավիթ բեկը գալիս, հարձակվում է նրա վրա, պաշարում ամրությունները և երկու օր հետո նրան բռնում, տանում է Շինուհայր և հրամայում տասներկու օր եկեղեցում բոլորի ներկայությամբ բարձր ձայնով ասել առածի խոսքը. «Լո՛ւյս Լուսավորչի հավատին, վա՛յ ուրացողին»:

Այնուհետև Դավիթ բեկը հատում է նրա գլուխը: Ապա սուրհանդակներ է ուղարկում Հալիձոր, տեր Ավետիսի և նրա աներոջ՝ մելիք Փարսադանի մոտ, և ասում՝

եկեք միաբանվեք մեզ հետ, որ վտարենք բոլոր թուրքերին երկրից: Ահա այսպես արդար պատժի է արժանանում ուրացող ու դավաճան Բաղրին:

Նորագույն ժամանակներում ևս Տաթևի վանքը գտնվում էր Սյունյաց ներքաղաքական կյանքի կիզակետում՝ շնորհիվ Տաթևի վանքի վանահայր Հովհաննես Տեր-Գրիգորյանի: 1918 թ. օգոստոսի 2-ին Տաթևի վանքին է մոտենում Զորավար Անդրանիկն իր հեծյալներով ու գաղթականների խմբով: Վանքի հոգևորականները, վանահոր գլխավորությամբ, Անդրանիկին դիմավորում են վանական համալիրի մուտքի մոտ, ապա Զորավարի պատվին ճաշկերույթ են կազմակերպում: Զորավարը և սպայակազմը գիշերում են վանքում, իսկ զինվորներն ու գաղթականությունը՝ վանական համալիրի ընդարձակ տարածքում: Հաջորդ օրը՝ օգոստոսի 3-ին, կեսօրից առաջ, Անդրանիկն իր հեծելազորի հետ Տաթևից ճանապարհվում է դեպի Զանգեզուր գավառի վարչական կենտրոն Գորիս:

1920 թ. դեկտեմբերի 25-ին Տաթևի վանքում գումարվում է Համազանգեզուրյան առաջին համագումարը, որը վճռում է՝ «Զանգեզուրը յայտարարել ժամանակաւոր ինքնաւար, մնալով անկախ մինչև քաղաքական հնարաւորութիւն կունենայ միանալու իր մայր երկրի՝ Հայաստանի հետ»: Ինքնավար Սյունիք հռչակած համագումարը միաձայն որոշեց ընտրել Նժդեհին որպես «Սիւնեաց Սպարապետ եւ իր բախտը յանձնել նրան»:

Նժդեհն առաջվա պես վճռական էր համարում ժողովրդի բարոյական ոգու ամրացումը, ուստի գրեց սյունեցիներին ուղղված, յոթ պատվիրաններ պարունակող մի պատգամ, որն այդ օրերին կարդում էին Սյունիքի եկեղեցիներում, դպրոցներում, զորանոցներում, ռազմաճակատներում, գյուղի թե քաղաքի ամեն մի հարկի տակ: Ահա այդ պատվիրանները.

1. «Երբեք առանց Սյունիքի և Արցախի: Առանց Հայաստանի աշխարհագրական այդ ուժեղ ողնաշարի, մեր ամբողջական հայրենիքը գոյություն ունենալ չի կարող:

2. Լեռներիդ վրա, լեռներիդ մեջ է քո փրկությունը: Արդ, տաճարներիդ մեջ, խաչերիդ կողքին բարձրացուր մի-մի ժայռ և՛ պաշտե, և՛ երկրպագե, որ չթուլանա փրկարար պաշտամունքդ դեպի լեռները:

3. Սպարտա: Քո երկիրը, որպես նոր Սպարտա կարող է գոյություն ունենալ տխուր Արևելքում: Զգտի՛ր, կարող ես և պիտի դառնաս:

4. Երբե՛ք անզեն: Թող նախ հարևանները իրենց սրերը խոփերի և նիզակները օթոցների վերածեն:

5. Եվ ոչ մի ընչազուրկ՝ քո հողի վրա: Խեղճերի արցունքից ու թույլերի անարիությունից են քանդվում հայրենիքները: Բոլոր որդիներդ անկարոտ և արի:

6. Մի ժողովուրդ — մի ընտանիք: Ազգերի մեջ գուցե և միայն դու իրավունք չունես ներքուստ պառակտված լինելու:

7. Եղի՛ր ուժեղ, էլի ուժեղ, և մի՛շտ ուժեղ: Ժողովուրդները վերջիվերջո տեր են մնում ոչ թե նրան, ինչ որ նրանց տրվում է, ինչ որ մուրում են, այլ միայն նրան, ինչի որ արժանի են, ինչ որ իրենց սեփական ուժերով ապահովել են կարողանում»:

1921 թ. փետրվարյան ապստամբության պարտությունից հետո Սյունիք նահանջած Հայրենիքի փրկության կոմիտեն ապրիլի 21-ին ինքնալուծարվում է Տաթևի վանքում:

1921 թ. ապրիլի 27-ին Տաթևի վանքում գումարվում է Համազանգեզուրյան երկրորդ համագումարը, որը Ինքնավար Սյունիքը հռչակում է Լեռնահայաստան: Պատգամավորների ելույթներից հետո ձայների մեծամասնությամբ համագումարը որոշում է.

1. «Ինքնավար լեռնաշխարհ Ազատ Սյունիքը» հայտարարել անկախ պետություն և այն վերանվանել Լեռնահայաստան, որի մեջ մտնում են Զանգեզուրը, Վայոց ձորը (Դարալագյազ) և Լեռնային Ղարաբաղը: Գորիս քաղաքը համարել Լեռնահայաստանի մայրաքաղաք:

2. Քանի որ նորաստեղծ պետությունն ազդարարվում էր հանրապետական և ժողովրդավարական, ուստի այն պետք է ունենար համապատասխան հաստատություններ՝ պառլամենտ, նախարարների խորհուրդ և ինքնիշխանությանը բնորոշ մյուս հատկանիշները:

3. Համագումարը հայտարարել Լեռնահայաստանի վարչապետություն՝ նախարարների խորհուրդ: Կառավարության անդամներին հետայսու անվանել նախարարներ:

4. Վարչապետ ընտրել Սպարապետին՝ նրան վերապահելով նոր կառավարության կազմի ընտրությունը:

Լեռնահայաստանի վարչապետ է ընտրվում Նժդեհը՝ միաժամանակ ստանալով զորավարի աստիճան և պարգևատրվելով «Խուստուփյան արծիվ» երկաթե շքանշանով:

Փետրվարյան ապստամբության պարտությունից և Երևանից հեռանալուց հետո Սյունիքում գործում են երկու՝ Ս. Վրացյանի գլխավորած Հայաստանի Հանրապետության և Գարեգին Նժդեհի գլխավորած Լեռնահայաստանի կառավարությունները: Նժդեհը Լեռնահայաստանի հռչակումը պայմանավորում էր ոչ թե Սյունիքի անկախության, այլ անվտանգության երկարաձգման, ուժերի վերախմբավորման անհրաժեշտությամբ: Սակայն կարևորելով ուժերի միավորման հրամայականը՝ 1921 թ. հունիսի 1-ին երկու կառավարությունները միավորվում են, Լեռնահայաստանը հռչակվում է Հայաստան, վարչապետ է ընտրվում Ս. Վրացյանը, իսկ զինված ուժերի գլխավոր հրամանատար՝ Գ. Նժդեհը: 1921 թ. հունիսի 26-ին Ս. Վրացյանին ուղղված գրության մեջ Նժդեհը գրում է. «Քանի դեռ ինքնավար Լեռնահայաստան կա՝ Նախիջևանն ու Շարուրը չեն կարող կցել Ադրբեջանին, հայկական Ղարաբաղը չի ադրբեջանանա....»:

Թեև հետագայում Սյունիքը խորհրդայնացվում է, բայց մնում է հայկական ու ընդգրկվում ՀԽՍՀ կազմում: Իսկ հեռանալուց առաջ Նժդեհը սյունեցիներին հայտարարում է, որ ինքն ընդմի՛շտ չի հեռանում Լեռնահայաստանից և պիտի վերադառնա, եթե Երևանի փոխարեն Բաքուն լինի Սյունիքի հողի վրա ոտք դնողը:

Արման ՄԱԼՈՅԱՆ, պ. գ. թ.

«Հոգ չէ, թե կզոհվեմ հազարամյա տաճարի շեմին...»

➥ էջ 5

Սակայն անհողդողդ Վեհափառը մերժում է նրանց՝ ասելով. *«Եթե հայ զորքն ու ժողովուրդը ի վիճակի չեն պաշտպանելու այս սուրբ վայրերը, ապա ես ինքս մենակ սուր կվերցնեմ և կընկնեմ Մայր տաճարի գավթում, բայց չեմ հեռանա մեր պապերից ավանդ մնացած Մայր Աթոռից...»:*

Այնուհետև Ամենայն Հայոց Կաթողիկոսը կարգադրում է օր ու գիշեր հնչեցնել Մայր տաճարի զանգակատան ղողանջները՝ ահազանգելու տագնապալի պահը և ժողովրդին ի զեն կոչելու: Դիմելով միաբանության անդամներին՝ Վեհափառն ասում է. *«Մեզ խորհուրդ են տալիս լքել Մայր Աթոռը և հեռանալ Սուրբ Էջմիածնից: Ես ինքս մնում եմ, ձեզանից ովքեր ցանկանում են գնալ, ազատ են, կարող են գնալ»:* Միաբանները ոչ միայն չեն հեռանում, այլև ավելի են ոգեշնչում Վեհափառին՝ պատրաստակամություն հայտնելով ռազմադաշտ մեկնելու: Կաթողիկոսն իջնում է Վեհարանից և Մայր տաճարի Իջման Սուրբ Սեղանի առաջ արտասվալի աչքերով երկար աղոթում: Հետագա օրերի ընթացքում գիշեր-ցերեկ ղողանջում են Հայոց աշխարհի եկեղեցական բոլոր զանգերը՝ պայքարի դաշտ հրավիրելով բոլորին:

Ահավասիկ Կաթողիկոս Գևորգ Հինգերորդի կոչը հայ ժողովրդին. *«Ա՛զգ հայոց, թուրքը՝ մեր բանակամ հոտի դարավոր թշնամին, նվաճել է Ալեքսանդրապոլը, շարժվում է դեպի սիրտը մեր երկրի, մեր հավատի, մեր կենսագրության: Գալիս է Արարատյան Երկրի վրա:*

Թուրքը, կոտորած ու ավեր փռելով, գալիս է, և մեր զորապետներն էլ այլ ելք չեն գտնում այդ աղետից, քան հայոց հայրապետին փախուստի մղել: Նրանք ինձ առաջարկում են ոսոխի բերանին թողնել Մայր Աթոռ Սրբ. Էջմիածինը, մեր սրբարանը, հայ ժողովրդի վերջին կտորը:

Ո՛չ և ո՛չ: Հազար անգամ ո՛չ: Ես չեմ լքի մեր սուրբ նախնիներից ավանդ մնացած Մայր Աթոռը: Եթե հայ ժողովուրդը չի կարող թշնամու առաջխաղացումը կասեցնել, եթե ի զորու չէ փրկելու մեր սրբությունները, ապա ես ինքս սուր կվերցնեմ և կ՚ընկնեմ Մայր Տաճարի գավիթում, բայց չեմ հեռանա պապերից ավանդ մնացած Սուրբ աթոռից:

Իսկ եթե եկել է վերջը, ապա այն ինչո՞ւ չընդունենք պատվով ու քաջությամբ, և ո՛չ թե ողորմելի ստրուկի պես ոսոխի առաջ սողալով: Մեր պատմության անցյալ դարերը լիքն են քաջությամբ ներկված նահատակների արյամբ: Դրանով չի սպառվել մեր արյունը և ուժը: Դարեր շարունակ հայ ազգն ապրել է ինքնության համար պայքարելով: Դրա համար է, որ զանգվածային կոտորածներով հարուստ մեր կենսագրությունը չի՛ ունեցել և չի՛ ունենա վերջին վերջակետ:

Ուրեմն էլ ինչո՞ւ ազգովին չբարձրանանք թշնամու դեմ, որը գալիս է ծարավ մեր վերջին արյունին»:

Այսպես՝ Գևորգ Ե Սուրենյանց Կաթողիկոսը ոչ միայն չի լքում Ս. Էջմիածինը, այլև ժողովրդի ներկայությամբ ուխտ է անում՝ անձամբ պաշտպանելու Մայր Աթոռը: Կաթողիկոսի կեցվածքը խոր ազդեցություն է գործում բոլորի վրա: Առկա պայմաններում, երբ քաղաքական կամք չկար դիմադրելու ոսոխին, և իշխում էր հանձնվողականության տրամադրությունը, Ս. Էջմիածինն արթնացնում է ազգային դիմադարձ ոգին: Շուրջ հինգ հարյուր հոգևորական է մեկնում ռազմադաշտ: Մայր Աթոռի հոգևորականները կենաց ու մահու ճակատամարտերում իրենց անմիջական մասնակցությամբ քաջալերում էին հայ կամավորներին: Պահպանվել է պատմական պահի լուսանկարը, երբ Վեհափառն օրհնում է կամավորական զորքերին:

Ինքնապաշտպանական պայքարը գլխավորում են Էջմիածնի ճեմարանի տեսուչ Գարեգին եպիսկոպոս Հովսեփյանը, Էրզրումի հոգևոր առաջնորդ Զավեն եպս. Մահտեսի-Բաբայանը, վարդապետներ Եզնիկն ու Թադևոսը, տեր Հովհաննես քհն. Տեր-Մկրտչյանը:

Գարեգին եպս. Հովսեփյանը գլխավորում էր ղարաբաղցիներից բաղկացած հինգերորդ գունդը՝ «Մահապարտներ» անունով: Սիմոն Վրացյանը նրան համեմատել է Ղևոնդ Երեցի հետ. *«Էջմիածնի միաբանը շրջում էր մի մասից մյուսը և իր ճառերով բարձրացնում զորքերի տրամադրությունը: Կրկնվում էին Վարդանանց պատմական օրերը...»:*

Բաշ-Ապարանի ճակատամարտում տեր Տաճատ և տեր Հովհաննես քահանաների առաջնորդած աշխարհազորային ջոկատներն առաջինը դիմագրավեցին թուրքական զորքերի հարձակումներին: Մինչև աշխարհազորայիների օգնության հասնելը՝ տեր Տաճատի ջոկատը՝ 40—50 մարդ, մարտնչեց թուրքական առաջապահ զինվորների դեմ՝ կասեցնելով նրանց առաջխաղացումը դեպի Երևան:

Ղարաքիլիսայի ճակատամարտում Հայկական զինված ուժերին աջակցում էին կամավորական շարժման հայտնի ղեկավարներից Մեսրոպ արք. Տեր-Մովսիսյանը, Դարպաս գյուղի քահանա՝ տեր Կոմիտաս Սարգսյանը: Նրանք, համախմբելով մի քանի գյուղերի բնակիչներին, ամուր դիմադրություն ցույց տվեցին թշնամուն:

Գևորգ 5-րդ Վեհափառն օրհնում է կամավորներին, 1918 թ.

Գևորգ Հինգերորդ Սուրենյանց Ամենայն Հայոց հայրապետի կեցվածքի, Արամ Մանուկյանի առաջնորդական տաղանդի, Դրոյի անվեհերության և ողջ ժողովրդի զոհողության շնորհիվ հնարավոր եղավ թուրքական գրոհը կանգնեցնել Սարդարապատում, ապա՝ Բաշ-Ապարանում: Թուրքերը ոչ միայն չկարողացան Սարդարապատից առաջ շարժվել, այլև տալով երեք հազարից ավելի զոհ՝ նահանջեցին Ալեքսանդրապոլ:

Մայիսի 28-ին Թիֆլիսում՝ հայ մեծահարուստ նավթարդյունաբերող Միքայել Արամյանցի տանը, Հայոց ազգային խորհուրդը հռչակում է Հայաստանի Հանրապետությունը:

Սարդարապատի և Բաշ-Ապարանի հաղթանակներով ոգևորված՝ հայկական զորքերն առաջ էին շարժվում դեպի Ալեքսանդրապոլ՝ ազատագրելու քաղաքը: Մայիսի 29-ին գեներալ Մովսես Սիլիկյանը կոչ է ուղղում հայերին. *«Մենք պետք է թուրքերից հետ վերցնենք Ալեքսանդրապոլը: Նրանք պահանջում են Ախալքալաքի, Ալեքսանդրապոլի ու Էջմիածնի գավառները Մայր տաճարի հետ միասին, Երևանի նահանգի մեծ մասն ու Նախիջևանը: Կարո՞ղ ենք թույլ տալ նման վիրավորանք: Երբե՛ք, հայ ժողովուրդ, դու չպիտի թույլ տաս այդպիսի անարգանք: Եվ այդ անարգանքը տեղի չի ունենա, եթե մենք հասնենք մինչև Ալեքսանդրապոլ: Դեպի՛ զենք բոլորդ, դեպի՛ Ալեքսանդրապոլ»:* Սակայն երբ հայկական զորքերը մոտենում էին Ալեքսանդրապոլին, Թովմաս Նազարբեկյանը կանգ առնելու հրաման տվեց, քանի որ Ազգային խորհուրդը տեղեկացրել էր, որ Բաթումում զինադադարի համաձայնություն է կայացվել, հաշտության բանակցություններ են ընթանում: Զորքերի առաջընթացի դադարեցման պաշտոնական որոշումը կայացվել էր այն գիտակցությամբ, որ զինապահեստները գրեթե դատարկ են, թուրքական զորքերը նոր համալրումներ են ունենում, և հնարավոր պարտությունը կլիներ վերջնական կորուստ:

Մայիսի 30-ին սկսված բանակցություններն ավարտվում են հունիսի 4-ին. Հայաստանի նորանկախ հանրապետությունը կնքում է առաջին միջազգային պայմանագիրը՝ հաշտության և բարեկամության դաշնագիրը Օսմանյան կայսրության հետ: Բաթումի պայմանագիրը ռազմական գերակշռություն ունեցող Թուրքիայի կողմից պարտադրված ակտ էր՝ բաղկացած 14 հոդվածից: Առաջին հոդվածով հռչակվում էր «խաղաղություն և հարատև բարեկամություն» երկու կառավարությունների միջև: 2-րդ հոդվածով որոշվում էր Օսմանյան կայսրության և Վրաստանի, Հայաստանի ու Ադրբեջանի միջև սահմանը, ըստ որի՝ Հայաստանի Հանրապետության տարածքը պարփակվում էր Երևանի գավառի մի մասով և հարակից մի քանի շրջաններով՝ ընդհանուր առմամբ 10 հազար քառակուսի կիլոմետր տարածությամբ: 4-րդ հոդվածով նախատեսվում էր Թուրքիայի ռազմական օգնությունը, եթե Հայաստանի Հանրապետությունը խնդրեր նրանից՝ «երկրի ներսում կարգն ու հանգստությունն ապահովելու համար»: 5-րդ հոդվածով Հայաստանի Հանրապետության կառավարությունը պարտավորվում էր թույլ չտալ իր տարածքում հակաթուրքական զինված խմբերի կազմավորում: 6-ից 10-րդ հոդվածները հիմնականում ուղղված էին Հայաստանում իսլամադավան բնակչության իրավունքների պաշտպանությանը, երկաթուղիների օգտագործման, փոստ-հեռագրային հարցերին:

Ինչպես սկզբում նշեցինք, Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ Սուրենյանցը հայրապետական գահակալության ամբողջ ընթացքում նվիրված էր հայրենականազգային կյանքի խնդիրների լուծմանը: Այսպես՝ 1912 թ. Կաթողիկոս Սուրենյանցի նախաձեռնությամբ կազմվել է Հայ ազգային պատվիրակությունը՝ Պողոս Նուբարի ղեկավարությամբ, որի վրա դրված էր Հայ դատը եվրոպական կառավարությունների առջև պաշտպանելու առաքելությունը: Հայ դատի պաշտպանության ուղղությամբ կարևոր նշանակություն ունեցան արևմտահայությանը նեցուկ լինելու հայցով Գևորգ Ե Սուրենյանցի հեռագրերը Ռուսաստանի, ԱՄՆ-ի, Իտալիայի, Անգլիայի և Ֆրանսիայի ղեկավարներին: 1914 թ. դեկտեմբերի 28-ին Գևորգ Ե Սուրենյանցի կոնդակով և նրա նախագահությամբ ստեղծվել է Եղբայրական օգնության կոմիտեն, որն զբաղվել է պատերազմի ժամանակ վիրավոր հայ կամավորներին և տասնյակ հազարավոր արևմտահայ գաղթականներին օգնություն ցուցաբերելու խնդիրներով: Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո նա կոնդակներով համայն հայությանը կոչ է արել օգնել կառավարությանը հայրենիքի վերակառուցման գործում, վերադառնալ հայրենիք: 1920-ի հոկտեմբերի 30-ին Գևորգ Ե Սուրենյանցը № 416 կոնդակով ապրիլի 11/24—ը սահմանեց «Հայկական տարագրության, կոտորածի զոհերի և բյուրավոր նահատակների հիշատակի հատուկ օր՝ Տոն Ազգային — հիշատակ բյուրավոր նահատակաց մերոց հընթացս համաշխարհային պատերազմի»: Նույն օրը նրա հրահանգով բոլոր եկեղեցիներում պետք է մատուցվեր հանդիսավոր պատարագ, և կատարվեր հոգեհանգիստ: Նրա ջանքերով նորոգվել են եկեղեցիներ, կառուցվել նորերը, բացվել են նոր դպրոցներ, ուսումնական հաստատություններ, ստեղծվել է «Թիֆլիսի հայ քահանաների միաբանությունը»: Սակայն ժողովուրդը և պատմագրությունն առհասարակ, ինչպես նկատեցինք, Սարդարապատում ունեցած զգալի դերով կշռադատեց Կաթողիկոս Սուրենյանցի վաստակը:

Այսպիսով՝ Գևորգ Ե Սուրենյանցի կաթողիկոսության շրջանը զուգադիպեց Հայոց պատմության ամենաողբերգական շրջափուլին՝ ցեղասպանություն, մայիսյան հերոսամարտեր, Հայաստանի Առաջին Հանրապետության հռչակում, Հայաստանի խորհրդայնացում, ստալինյան բռնաճնշումներ: Սակայն ոգու արիությամբ և իմաստուն վարքով ճակատագրական շրջանում Ամենայն Հայոց Կաթողիկոսը կարողացավ պատվով պահպանել Ս. Էջմիածինը:

Թաթուլ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Պետություն կմնանք, եթե դառնանք մեր ինքնությանը

Հազար անգամ ասված, բայց չընկալված ճշմարտությունների մասին պետք է հազար մեկերորդ անգամ բարձրաձայնել: Մենք ինքնաբավարարված ապրում ենք՝ ճշմարտության մասին դատելու կարողությամբ ճշմարիտ ապրելը շփոթած: Մինչդեռ դրանք շատ տարբեր են: Համոզված եմ՝ ոմանք պիտի ասեն, որ բացարձակ ճշմարտություն չկա, որ ամեն ինչ հարաբերական է: Թերևս, բայց դա նույնպես ինքնարդարացման տարբերակ է:

Եթե հայրենիքդ քեզ համար անբեկանելի ճշմարտություն է, ուրեմն կռիվ ունես տալու, ուրեմն չես կարող փախչել: Ի՞նչ ենք արել միասնական լինելու համար: Ցավոք, միասնական եղել ենք պահի մեջ, երբ մեր բնազդը, ավելի ճիշտ՝ գենը, գերազանցել է բանականության հաշվարկին, ինչպես 1988-ին: Պահի տրամաբանությամբ հավակնում ենք պետության անկախություն պահել, հավերժելու և հավերժացնելու մասին խոսել: Պահի տրամաբանությունը հատուկ է թույլերին, նպատակ ու գաղափար չունեցողներին: Անշուշտ, տեսականորեն ամենքս էլ՝ թե՛ պետության առաջնորդ-ղեկավարները և թե՛ ժողովուրդը, գիտենք, որ պետություն կմնանք, եթե մեր ձեռքը մեր սրտին դնենք, եթե հայրենիքն ապրում դառնա, որի համար դողանք, այլապես, միասնության մասին տարփողելով, ավելի ենք հեռանալու իրարից՝ հայրենիքի անկախ գոյաբանության ճակատագիրը թողնելով ապազգային պաշտոնյա-ղեկավարներին, որոնք ազգի ցավին և ուրախությանը տեր կանգնելու փոխարեն միայն արձանագրում են դրանք:

Ազգային ղեկավարություն ասվածը, ամենապարզ տրամաբանությամբ, նշանակում է նաև ժողովրդի թիկունքին կանգնած, ժողովրդին սատարող ուժ, որը կօգնի ցավը հաղթահարել, ինքն իրեն վերագտնել, սեփական պատմությունը կերտելու կամքը դարձնել վճռորոշ: Ազգային ղեկավարություն ասվածն առաջին հերթին հայրենիքի զինվոր լինել է նշանակում, որը մի թիզ հողի կորստի համար իրեն պատասխանատու կզգա ժողովրդի առջև, որը հայրենիքի պաշտպանության պատվախնդրությանը ստվեր չի գցի՝ աչքը հառելով օտար հորիզոններին: Այս ամենը բնավ չի հակասում արդեն քանի տարի չարչրկվող «երրորդ ուժի բացառման» փիլիսոփայությանը: Պարզից էլ պարզ է, որ յուրաքանչյուր ազգ գոյատևում է իր ինքնությամբ, սեփական հոգևոր արժեքներով, բայց ապրում է՝ հարաբերվելով տարբեր ժողովուրդների և պետությունների հետ: Ամենայն իմաստով հասկանալի է այսինչ կամ այնինչ ուժի անխուսափելիությունը, ինչը, դժբախտաբար, մեզ ներկայացնում են ոչ թե որպես ցանկացած անկախ պետության համար օրինաչափ երևույթ, այլ որպես մի աներևակայելի զորություն, որի պարտադիր ներկայությամբ է պայմանավորվում մեր լինել-չլինելը:

➥ էջ 7

Պետություն կմնանք, եթե դառնանք մեր ինքնությանը

↩ էջ 6

Այսինքն՝ ինչպես կոմունիստների օրոք, այսօրվա իշխող մտայնությամբ էլ հարություն է առնում մի գերխնդիր՝ հայ ժողովրդին պահել համայնքի հոգեբանությամբ՝ թույլ չտալով ապրել անկախության ներշնչած ինքնավստահությամբ: Եվ դարձյալ մեր մեջ դեռևս ապրող ստրուկը գլուխ է բարձրացնում ու որոշում մեր ապրելիք կյանքը: Ամենքս տագնապած սպասում ենք, թե Հայաստանի Հանրապետության իշխանությունն ազգի ճակատագիրը վճռող հերթական փաստաթուղթը ստորագրելիս այս անգամ ո՞ւմ է ականջալուր լինելու: Մինչդեռ չգիտակցված ճշմարտությունը, որի բացակայությունը անկառավարելի տարուբերումների է ենթարկում հայրենիքի նավը, արյան հիշողությամբ ու վճռական կեցվածքով պետք է պարտադրվի:

Այսօր էլ մեր հայացքն ուղղում ենք օտար «տիրոջ» կողմը՝ հնազանդ ունկնդիր դառնալով քարոզիչներին, որոնք համոզում են, թե այս անգամ ընտրած «տերը» քաղաքակիրթ է, առաջադեմ: Եթե իմ վիճակը ճորտությունն է, նշանակություն չունի, թե տերս ով է: Եթե անկախ հայրենիքում տիրոջ զգացում պիտի ունենանք այնքանով, որքանով դրա հնարավորությունը կտա մեր ղեկավարների ընտրած «երրորդ ուժը», ուրեմն մենք մեր տանը վարձակալ ենք:

Արցախյան պայքարի այս ամբողջ ընթացքը մեզ պիտի հուշի, որ օտարը միայն հուսատու է, կարեկից ու խոստումնառատ, բայց միայն մենք ենք մեր վաղվա տերը: Դժբախտաբար, հաճախ մենք ազդվում ենք համընդհանուր տրամաբանություններից, և պատահական չէ, որ շատերը հեռացան 1988-ի միասնական պայքարից, հակվեցին այն հատվածական սխալ մտայնությանը, թե Արցախի պայքարը արցախցու խնդիրն է, Սյունիքինը՝ սյունեցու, Տավուշինը՝ տավուշցու.... Երբ հայրենիքդ պատերազմի մեջ է, օրհասական պահի առջև է կանգնած, բոլորս Հայաստանում թե արտերկրում պարտավոր ենք օգտակար լինել հայրենիքին: Եթե մեզ պիտի վախեցնի հայրենիքի ծանր կացությունը, եթե պիտի զլանանք մեր ունեցածը տալ, ուրեմն՝ հայրենասիրական բոլոր զեղումներն ինքնախաբեություն են: Եթե պիտի Հայաստանում, Ամերիկայում, Ռուսաստանում և այլուր նստած սպասենք, որ սկուտեղի վրա մեզ ամբողջական հայրենիք են մատուցելու, և մեզ միայն վայելքն է մնում, սխալվում ենք: Հայրենիքի գոյության երաշխիքը անկախության պահպանումն է, իսկ դա լինում է, եթե հայրենիքիդ տալո՛ւ մասին ես մտածում և ո՛չ վերցնելու:

Հայաստանի սոցիալ-տնտեսական կացությունը շատերիս շեղեց Արցախի կողքին կանգնելու ուղուց: Արցախի պայքարն այսօր դարձել է քավության նոխազ: Ոմանց թվում է, եթե չլիներ Արցախի պայքարը, իրենք կապրեին անհոգ ու բավարար կյանքով: Այսպես մտածողները, դժբախտաբար, մոռանում են շատ կարևոր ազդակներից մեկը. սոցիալականից ու տնտեսականից բացի՝ կա բարոյական խնդիր: Մինչդեռ Արցախի պայքարը ոչ միայն չպիտի հակադրել Հայաստանում ստեղծված իրավիճակին, այլև պետք է հավատանք այն ճշմարտությանը, որ Արցախում մեր հաջողությունները նեցուկ էին Հայաստանին՝ ավելի հեշտորեն հաղթահարելու դժվարությունները:

Դողանք մեր բարոյական արժեքները այս դժվար օրերին անխաթար պահելու զգացման վրա: Առավել դողանք Արցախի պայքարի էջը չփակելու հաստատակամության վրա, որովհետև Արցախով է անցնում նաև մեր ինքնահաստատման ճանապարհը...

Ռուզան ԱՌԱՔԵԼՅԱՆ
հրապարակախոս

ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԸ

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Անդաստանի ծեսը

Սկիզբը՝ նախորդ համարում

Լսելով Անդաստանի շքերթի բուն բովանդակությունից՝ կարելի է ասել, որ այն պետք է ներկայացնի կոլեկտիվ անհատին, այսինքն՝ շքերթի գործառույթներից կարևորագույն է միասնականության ապահովումը: Սովորաբար ավանդական հասարակության, համայնքի մեջ այդ միասնականությունը կամավոր է. պարբերաբար և որոշակի առիթներով շքերթ կատարելը բխում է ինչպես հանրության, այնպես էլ յուրաքանչյուր անհատի շահերից և հանդիսանում է ներքին պահանջ:

Շքերթի մյուս կարևոր գործառույթներից է տարածական սահմանագծումը, որի մասնավոր դրսևորումներից է շրջանի ամփոփումը: Այս գործառույթն իր կայուն պարբերականությամբ կապված է տիեզերքի վերահաստատման գաղափարի հետ, որտեղ պարբերականությունն արտահայտվում է շրջանի խորհրդանշանով: Երթը՝ որպես տեղափոխություն մեկ նշանագրված օբյեկտից (օրինակ՝ բնակավայրից կամ հավաքատեղիից) դեպի մյուսը՝ ծիսականապես հատուկ կարևորված կետը (օրինակ՝ տաճարը, սրբավայրը կամ կառավարության շենքը), ուրվագծում է տվյալ շքերթին վերաբերող ծիսական տարածքը: Անդաստանի դեպքում երթը շրջանագծում է եկեղեցու ներսը, եկեղեցու շուրջը, այգին կամ հանդը, որոնք խորհրդաբանորեն ներկայացնում են տիեզերքը կամ աշխարհը:

Շրջանաձև տեղաշարժը կապված է տիեզերական ռիթմի հետ: Հետևաբար ոչ միայն ամբողջական շրջանագծումը, այլև մասնակիցների գործողությունները պետք է ունենան որոշակի հավասարաչափ ընթացք: Որոշ դեպքերում այդ ընթացքն ապահովագրում է երգն ու պարը, մյուս դեպքերում՝ խոսք-բանաձևի խմբովի արտասանությունը կամ համատեղ քայլքը: Անդաստանի դեպքում մենք ունենք երգի, խոսք-բանաձևի և համատեղ քայլքի ամբողջություն:

Օ. Ֆրեյդենբերգն անտիկ աշխարհի ծիսական երթերի մասին գրում է. «Գործողությունը և ռիթմը՝ որպես մարդկային հասարակության գիտակցության պարզագույն կենսաբանական տարրեր, անմիջապես ենթարկվում են մեկնաբանության՝ վերածվելով զուգահեռ աշխարհայացքային ձևերի: .... այդպիսի ռիթմիկ-կինետիկ արարողությունների հնագույն ձևն է քայլելու գործողությունը. ոտքը, քայլքը, քայլելով շարժվելը, որոնք իմաստավորվելով շքերթի մեջ որպես արևի շարժում հողի տակ և երկնքով (լույսի անհետացում—հայտնություն)՝ նույնացվում են ռիթմի հետ: Այստեղից՝ շրջանով երթերը, շրջանաձև պարերը, ինքը՝ շրջանը, ի հայտ են գալիս հարթության մեջ՝ որպես տարածության սահմանափակ հատվածներ՝ բաղկացած իրար հավասար երեք մասից, որտեղ առաջընթաց շարժումը հավասար է հետընթաց շարժմանը և կանգառին»:

Ինչպես ասվեց վերևում, Անդաստանի ժամանակ հանդիսադիրն ու աղոթասացը շարժվում են շրջանաձև, սակայն ոչ թե միանգամից, այլ կիսաշրջաններով և քառորդ շրջաններով: Եթե հանդիսադիրն արևմուտքից արևելք, իսկ աղոթասացն արևելքից արևմուտք (որոշ եկեղեցական սովորույթներում աղոթասաց եկեղեցականն Ավետարանով կանգնում է հանդիսադրի կողքին մինչև վերջին աղոթքը) շարժվում են կիսաշրջանով, ապա հանդիսադիրն արևելքից հյուսիս, իսկ աղոթասացն արևմուտքից հարավ շարժվում են շրջանի մեկ քառորդով: Ապա հանդիսադիրը կրկին հյուսիսից հարավ, իսկ աղոթասացը հարավից հյուսիս շարժվում են կիսաշրջանով՝ ամփոփելով շրջանը: Անցնելով կիսաշրջանը՝ կանգ են առնում, կատարվում է օրհնություն, որից հետո հակառակ՝ հետընթացով մեկ քառորդ շրջան, նորից կանգնում են, կատարվում է օրհնություն, կրկին անգամ կիսաշրջան առաջընթաց, կանգնում են, կատարվում է օրհնություն: Հետևաբար հանդիսադիրն առանձին շրջան է ամփոփում, աղոթասացը՝ առանձին՝ միահյուսված մեկը մյուսին: Սակայն գործ ունենք ոչ միայն շրջանագծման, այլև շրջանի մեջ խաչի ուրվագծման հետ: Արևմուտք—արևելք ուղղությունը խաչի ուղղահայաց գիծն է, իսկ այն պահին, երբ հանդիսադիրն ու աղոթասացը շարժվում են մեկ քառորդ շրջանով ու կրկին անգամ կիսաշրջան են անում հյուսիս—հարավ ուղղությամբ, գծվում է խաչի հորիզոնական գիծը: Իսկ աշխարհի չորս ծագերը հենց խաչի չորս ծայրակետերն են: Կարող ենք փաստել, որ միաժամանակ առկա են հորիզոնական և ուղղահայաց պրոյեկցիաներ:

Որպես կանոն՝ շքերթն ունենում է օժանդակ տարրեր, որոնք մի կողմից ուժգնացնում են նրա հանդիսավորությունը, մյուս կողմից նշանագրում են երևույթը որպես շքերթ: Դրանք են.

ա. լռությունը կամ երաժշտությունը,
բ. հատուկ առարկաները,
գ. մարմնակինետիկան,
դ. երթուղին,
ե. զգեստավորում-զարդարումը:

Ինչպես լռությունը, այնպես էլ երաժշտությունը՝ այդ թվում շխկշխկան (Անդաստանի դեպքում՝ քշոցի ձայնը), հարվածային կամ փողային նվագարաններով անորոշ ձայնարտաբերումը, քայլերգը, ծիսական օրհներգը խորհրդանշական իմաստով տարբերվում են հասարակ զրույցից, երկխոսությունից՝ նշանագրելով ծիսական հատուկ իրադրություն: Ընդ որում՝ լռությունը, որպես օրենք, խորհրդանշում է մահը, խոսքը՝ կյանքը, իսկ բուն երաժշտությունը՝ ժամանակից դուրս հայտնվող ծիսական իրականությունը: Սա նշանակում է, որ յուրաքանչյուր շքերթ իր ռիթմիկ երգով ու գործիքային երաժշտությամբ գտնվում է ժամանակից դուրս, ներկայացնում է անսովոր պարագաներ, գտնվում է ժամանակի առասպելական ընկալման համակարգում: Սովորաբար երաժշտության բովանդակությունը փոխանցում է շքերթի նպատակն ու իմաստը: Անդաստանը, լինելով կրոնական շքերթ, ուղեկցվում է երգվող շարականներով և աղոթքներով, սաղմոսներով, հատուկ ընթերցվածքներով, նաև քշոցներով. այդ բոլորը մատնանշում են Անդաստանը որպես հատուկ, ժամանակից անդին ծիսական իրականություն:

Ոչ պակաս կարևոր են շքերթի ընթացքում կիրառվող առարկաները: Ծիսական շքերթում դրանք կազմում են արարողության կորիզը և ապահովում են խորհրդանշական հագեցվածությունը: Ուխտավայր տարվող նվերները և զոհերը, սրբությունների նշխարները, պատկերները, սրբազան գրքերը, կրոնական զանազան խորհրդանիշները կրկնապատկում են սրբության անտես ներկայությունը: Անդաստանի մեջ այս դերում հանդես են գալիս Ավետարանը, ձեռաց խաչերը, խաչվառը և այլն:

Վերջապես՝ շքերթը սովորական իրականությունից անջատում է նաև մասնակիցների հանդերձանքը: Սովորաբար ուխտերի ու տոնական շքերթների համար ավանդական մշակույթում կա՛մ հատուկ զգեստներ են պահել, կա՛մ նորն են կարել և կա՛մ հագել են լավագույն զգեստը: Անդաստանի պարագայում եկեղեցականները կիրառում են եկեղեցական բոլոր զարդերն ու տոնական եկեղեցական զգեստները:

Շքերթի բուն նպատակին հասնելուց հետո, երբ տիեզերակարգը վերականգնված կամ հաստատված է, նրանից ստացած լիցքը, խորհրդանշաններն ու նշանները տեղափոխվում են կենցաղ և աշխարհիկացվում են՝ ավելի ամրապնդելով համայնքը: Օրինակ՝ Ծաղկազարդի Անդաստանի ծեսի ընթացքում օրհնված ուռենու ճյուղերը, Խաղողօրհնեքի Անդաստանի ծեսի օրհնված խաղողը կամ մեր նկարագրած Խաչվերացի Անդաստանից հետո Ս. Խաչի զարդարանք հանդիսացող ռեհանն ու ծաղիկները ժողովուրդը տուն է տանում:

Անուշավան եպիսկոպոս ԺԱՄԿՈՉՅԱՆ, պ. գ. դ.
Կարեն ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, պ. գ. թ.

Ակսել Բակունց

ԱՂՈԹՔ

Միայն Քեզ, Տե՛ր, միայն Քեզ եմ աղոթում:

Ընդունիր, Տե՛ր, իմ աղոթքը՝ սրտիս խորքերից բխած, թող Քեզ հաճելի լինեն իմ տանջված հոգու մրմունջները, և աղերսանքս մի՛ մերժիր, Տեր: Այս ուշ գիշերին, այս խավար գիշերին, երբ հոգիներն են զրուցում աստղերի հետ, և հազարավոր մարդիկ աղոթք են կարդում Քեզ, այս մութ գիշերին մի մերժիր հոգնած ու մոլար մարդու աղերսը:

Իմ միակ ապավենն ես Դու, Տեր, և հույս ու հանգրվանս: Քեզնից հզոր ու կարող չկա երկրում, Քո արդարությունը միակն է, Տեր, ինչպես վրեժդ: Հազարավոր կարոտյալների ու տանջվածների հոգուց եմ խոսում Քեզ հետ, և նրանց հոգուց, որոնք աղոթել չգիտեն, աղոթքի են պապակ:

Տեր, հզոր ես և կարող...

Հեռացրու տանջանքն այս ահավոր, զրկանքները բյուրավոր, էլ թող արցունքներ չհոսեն, թող հևոց չլինի, թող հրդեհ չլինի: Տեր, թռչունները բնակորույս են, այգիներն ամայի են, և շեները՝ ավերակ, մարդ չկա՝ վարդի հոտով զմայլվող, Տեր, ծուխ է ամենուր, տաճարներիդ գմբեթները հողի հետ են հավասարվում, Քո տները ավերվում են: Մոխիրը շատ է, արյունով հագեցավ երկիրը:

Հեռացրո՛ւ, հեռացրու, հեռացրու....

Խաղաղություն տո՛ւր երկրին, թող ծաղիկները բույր տան, թող առաջվա պես առուները կարկաչեն, և աստեղազարդ երկնքի տակ մարդիկ գովքդ մրմնջան, աղոթեն Քեզ:

Ամայի դաշտերում գայլերն են ոռնում, մենավոր շիրիմներն են աղերսում Քեզ: Տեր, անթաղ մեռելները Քեզնից հանգիստ են խնդրում, մի կտոր տեղ Երկրի գրկում՝ պառկելու:

Տեր, հազարավոր մատաղ կյանքեր մահացան, երազներ տրորվեցին, խինդն անցավ, և արցունքից մեր աչքերը կուրացան: Ո՞ւր եղան հին երգերը, ո՞վ էր այն անգութը, որ խլեց բոլորը, հրդեհեց տաճարները և հոգիները ամայի, ավերակ դարձրեց:

Հին լավ օրերը տուր, լավ օրերը բեր, ինձ Հերդային տուր: Խնայիր Հերդային, նրա հոգուն խնայիր: Այնքան շատ են Հերդաները: Քանիսներն են աղոթում, կարոտը հոգում, լավ օրեր տեսնելու հույսը սրտում: Շատերն են երազում հին պալատները, որ կառուցել են խինդով, եռանդով, վայելքի ու աղոթքի համար:

Հոգնել ենք, Տե՛ր, էլ ուժ չունենք, էլ դիմանալ չենք կարող: Ծանր է բեռը, մեր ուսերը կքվեցան, մեր ծունկերը կորացան: Մարեցին, մարեցին բյուրավոր հույսեր, և խավարի մեջ հանգան մատաղ կյանքեր, երազներով, հույզերով հարուստ, մոմի պես հալվեցին, ոչնչացան սերունդներ:

Տեր, հզոր ես, ավերը դադարեցրո՛ւ... թող վայելեմ Հերդայի սերը, ես դեռ գուրգուրանք եմ ուզում, ես ապրել ու վայելել եմ ուզում, ես ստեղծել եմ ուզում, իմ հոգին կերտել է ցանկանում:

Արյունը վայելք չէ, ավերը կերտվածք չէ, Տեր:

Տեր, բոլորին իրենց Հերդաները տուր, հին պարտեզներում թող սիրո բառերը հնչվեն, թող երգեն առաջվա պես և ստեղծագործեն, նոր շենքեր կերտեն:

Թող կառուցեն, Տեր, թող հորինեն:

Արյունը հերիք եղավ, մոխիրը շա՛տ-շատ է...

1918 թ.

Հոգեգալուստ

Քրիստոսի հրաշափառ Հարությունից հիսուն օր հետո Հայ Առաքելական Եկեղեցին տոնում է Հոգեգալուստը, որը կոչվում է նաև Պենտեկոստե, ինչը հունարենից թարգմանաբար նշանակում է հիսուներորդ: Սբ. Ներսես Շնորհալի հայրապետի սահմանած կարգի համաձայն՝ Հայ Եկեղեցին Հոգեգալստյան տոնը նշում է յոթ օր շարունակ: Այն ունի 35 օրվա շարժականություն՝ կապված Սբ. Զատկի փոփոխականության հետ:

Արևելյան Ուղղափառ Եկեղեցում Պենտեկոստեն հույժ կարևոր տոներից մեկն է: Այդ օրը եկեղեցիները հաճախ զարդարված են լինում կանաչ գույնով և տարատեսակ ծաղիկներով: Նրանց համար կանաչ գույնը կարծես այդ օրվա խորհրդանիշն է: Անգամ որոշ եկեղեցիներում Պենտեկոստեի օրը՝ սուրբ պատարագի ժամանակ, հոգևորականների ու հավատացյալների ձեռքերին լինում են ծաղիկներ և կանաչ ճյուղեր: Իսկ ահա Արևմտյան Եկեղեցիները Հոգեգալստյան տոնի հիմնական նշան են համարում կարմիր գույնը: Այն խորհրդանշում է Սուրբ Հոգու հրեղեն կրակը և խնդությունը: Արևմտյան Եկեղեցիներում Պենտեկոստեի սուրբ պատարագը նույնքան հարուստ և բազմազան է, որքան Արևելքում: Քահանաները, սպասավորները, երգչախումբը և ժողովուրդը տոնակատարությունների ժամանակ հագնում են կարմիր զգեստներ:

Լինելով քրիստոնեական մեծագույն խորհուրդ պարունակող տոն՝ Հոգեգալուստը սերտ աղերսներ ունի հուդայական Շավուոտ կոչվող տոնի հետ, որը նշվում էր Պասեքին հաջորդող հիսուներորդ օրը: Շավուոտը նաև հայտնի էր «Շաբաթների տոն» անվամբ, իսկ ռաբինական գրականության մեջ՝ «50 օրվա տոն»: Հակիրճ անդրադառնանք այս տոնի նշանակությանը:

Պաղեստինում ամեն տարի երկու բերքահավաք կար: Առաջին բերքահավաքը լինում էր մոտավորապես մայիս և հունիս ամիսներին, իսկ վերջինը՝ աշնանը: Պենտեկոստեի տոնակատարությունը կատարվում էր վաղ բերքահավաքի սկզբում, ինչը նշանակում էր, որ այն միշտ նշվում էր մայիսի կեսին կամ երբեմն հունիսի սկզբին: Այսպես՝ գոյություն ուներ հրեական երեք մեծ տոն, որոնց օրինականորեն պարտավոր էր մասնակցել յուրաքանչյուր հրեա տղամարդ, որն ապրում էր Երուսաղեմից 20 մղոն հեռավորության վրա: Այդ տոներն էին Պասեքը, Պենտեկոստեն և Տաղավարահարաց տոնը: Որոշ գիտնականներ ասում են, որ Պենտեկոստեին Երուսաղեմում ավելի շատ մարդիկ էին հավաքվում, քան նույնիսկ Պասեքին: Տոնն ուներ երկու հիմնական նշանակություն. նախ հիշատակվում էր Աստծո սրբազան օրենքի շնորհումը Մովսեսին, որը եղավ Սինա լեռան վրա Եգիպտոսից ելնելուց 50 օր հետո, երկրորդ՝ այն գյուղատնտեսական կարևորություն ուներ, քանի որ Աստծուն մատուցվում էր բերքի երեխայրիքը Պասեքի ժամանակ, իսկ Պենտեկոստեի օրը նվիրաբերվում էր «երկու հաց»՝ որպես երախտագիտություն Տիրոջը՝ շնորհված բերքի համար: Ահա այսպիսի հիշարժան տոնը մեծապես արժևորվում և վերաիմաստավորվում է նորկտակարանյան ժամանակներում: Այն իրավամբ համարվում է Եկեղեցու ծննդյան օր: Այժմ փորձենք հասկանալ, թե ինչ տեղի ունեցավ այդ օրը:

Ղուկաս ավետարանիչն այսպես է ներկայացնում պատումը. «Եվ հանկարծ երկնքից սաստիկ հողմի նման մի ձայն հնչեց ու լցրեց ամբողջ տունը, որտեղ նստած էին: Եվ նրանց երևացին բաժանված հրեղեն լեզուներ, որոնք նստեցին նրանցից յուրաքանչյուրի վրա: Եվ ամենքն էլ լցվեցին Սուրբ Հոգով ու սկսեցին խոսել ուրիշ լեզուներով, ինչպես որ Սուրբ Հոգին խոսել էր տալիս նրանց» (Գործք Բ 2–4): Սբ. Հոգին չեկավ գաղտնաբար, այլ իբրև սաստիկ հողմ և լցրեց ամենքին: Նա անուշաբույր հոտ տարածեց և անմահություն պարգևեց Երուսաղեմին՝ Աստծո սուրբ քաղաքին: Առաքյալների միջոցով Սուրբ Հոգու անուշահոտությունը լցվեց ամբողջ տիեզերքում, ինչպես և Պողոս առաքյալն է ասում. «Քանի որ Քրիստոսի բուրմունքն ենք Աստծու առաջ՝ և՛ փրկվածների մեջ, և՛ կորստյան մատնվածների մեջ» (Բ Կորնթ. Բ 15):

Այնուհետև ավետարանիչը շարունակում է նկարագրել, թե այդ պահին Երուսաղեմում բնակվում էին աստվածավախ հրեաներ՝ երկյուղած մարդիկ, երկնքի տակ բոլոր ազգերից, որոնք լսեցին ձայնը, եկան և տարակուսած հավաքվեցին, և յուրաքանչյուրը լսում էր, որ նրանք խոսում էին իրենց լեզուներով (Գործք Բ 5–6): Արդ, Կենդանարար և Ազատիչ Հոգու յոթնապատիկ պարգևները նվիրագործեցին ոչ միայն Քրիստոսի աշակերտներին, այլև Աստծո երկյուղով լցված այլազգի մարդկանց, որոնք զարմանքից պարուրվել էին անասելի գիտությամբ: Անտարակույս Սուրբ Հոգու գալուստը Վերնատան մեջ պարզապես նորակազմ Եկեղեցու անդամներին մխիթարելը չէր, այլ նրանց վրա աստվածային շնորհների հեղումն էր, որպեսզի նրանց հոգիները զորանային, մտքերը լուսավորվեին:

Արարիչ Սուրբ Հոգին դեռևս աշխարհի արարման օրերին շրջում էր ջրերի վրա և սրբացնում արարչությունը: Նա առաջնորդելով հանեց Իսրայելին Եգիպտոսից՝ ստրկության տնից, և տարավ խոստացված երկիրը: Նրանով է, որ շնորհներով լցվեցին Մովսեսը և յոթանասուներկու իմաստունները (Թվեր ԺԱ 25–29): Հիրավի Սուրբ Հոգու աստվածացնող գալուստը քարոզվել էր դեռևս հինկտակարանյան մարգարեների կողմից: Այն ակնհայտ իրագործումն էր այն խոստման, որը հարյուրավոր տարիներ առաջ Հովել մարգարեի բերանով Աստծված հայտնել էր. «Եվ կլինի, որ սրանից հետո Իմ Հոգուց կհեղեմ ամեն մարմնի վրա, և կմարգարեանան ձեր որդիներն ու ձեր դուստրերը, ձեր ծերերը երազներով կերազեն, և ձեր երիտասարդները տեսիլքներ կտեսնեն: Իմ ծառաների վրա և Իմ աղախինների վրա այն օրերին Իմ Հոգուց կհեղեմ, և կմարգարեանան: Նշաններ ցույց կտամ վերևում՝ երկնքում, և նշաններ ներքևում՝ երկրի վրա. արյուն, հուր և ծխե մրրիկ» (Հովել Բ 28–30): Քամին՝ իբրև ազատարար խոհրդանիշ Աստծո Հոգու, խոսում էր Եզեկիել մարգարեի հետ մի դաշտում, որը լի էր մարդկանց ոսկորներով (Եզեկիել 37): Մեր Փրկիչն Ինքն օգտագործեց քամու այս պատկերը Սբ. Հոգուն բնութագրելու համար, երբ Նիկոդեմոսին ուսուցանում էր, թե ինչ կարևոր էր Հոգու կողմից վերստին ծնվելը (Հովհ. Գ): Հիսուս Ինքն ասաց. «Եթե Ինձ սիրում եք, կպահեք Իմ պատվիրանները. և Ես պիտի աղաչեմ Հորը, և Նա մի այլ Մխիթարիչ պիտի տա ձեզ, որպեսզի հավիտյան ձեզ հետ բնակվի Ճշմարտության Հոգին» (Հովհ. ԺԴ 15–17): Եվ դարձյալ՝ «Մխիթարիչը՝ Սուրբ Հոգին, որին Հայրը կուղարկի Իմ անունով, Նա ձեզ ամեն բան կուսուցանի և ձեզ կհիշեցնի այն ամենը, ինչ Ես ասացի ձեզ» (Հովհ. ԺԴ 26): Ասաց նաև. «Դեռ շատ բաներ ունեմ ձեզ ասելու, բայց այժմ չեք կարող տանել: Երբ որ գա Նա՝ Ճշմարտության Հոգին, ամենայն ճշմարտութեամբ կառաջնորդի ձեզ» (Հովհ. ԺԶ 12–13):

Մեծապես ուսուցանելի է Հոգեգալստից առաջ Քրիստոսի ճշմարիտ հետևորդների կեցվածքը: Գործք Ա 14-ում ասվում է. «Սրանք բոլորն էլ միասին հանապազօրյա աղոթքի մեջ էին: Նրանց հետ էին նաև կանայք, ինչպես և Մարիամը՝ Հիսուսի մայրը, և նրա եղբայրները», իսկ Գործք Բ 1-ում ասվում է. «Պենտեկոստեի օրերը լրանալուց հետո բոլորը միասիրտ ու միատեղ էին»: Աստվածաշնչյան այս նկարագիրը ցույց է տալիս, թե ինչպիսի կեցվածք ուներ մի ժողովուրդ, որը պետք է ընդուներ Աստծո Հոգու զորությունը: Այսօր էլ մեզ համար վերոնշյալից մի քանի կարևոր հանգամանք օրինակելի է: Առաջինը մեկ վայրում միահոգի լինելն է: Անշուշտ քրիստոնեական կյանքում միայնակ չենք կարող ճամփորդել դեպի փրկություն, քանի որ մեզ պետք են մեր հոգևոր եղբայրներն ու քույրերը՝ որպես մի ամբողջություն Քրիստոսի մեկ մարմնի՝ Սուրբ Եկեղեցու: Շնորհք Պատրիարքն ասում է. «Ինչո՞ւ առաքյալները բոլորը միաբանված էին: Պատճառը շատ պարզ ու բացահայտ էր. որովհետև նրանք միասին ապրել ու միասին տառապել էին.... միասին տկարացել և վերջապես միասին երջանկացել էին: Եվ հետևաբար միասին էլ մեկ հոգով լցվել»: Այսպես՝ Մխիթարիչ Սուրբ Հոգու գալուստը կատարվեց, երբ Հիսուսի աշակերտները միասին էին, միախորհուրդ և միաբան: Երբ մենք էլ համախմբվենք և մոտեցնենք իրար մեր սրբազան ջահերը, հրդեհ ու բոց կլինի, որը ոչ մի թշնամու ուժ չի կարող հանգցնել: Երկրորդ՝ աղոթքի ոգով լցվելու անհրաժեշտությունն է այն գրավականը, որով Աստծո Հոգին կբնակվի մեր մեջ: Աղոթքի մեջ հարատևելով՝ մենք պետք է բացենք մեր սրտերը Աստծո առաջ՝ թույլ տալով, որ Բարձրյալը հեղի իր շնորհները: Այժմ էլ մեր Առաքելական Եկեղեցին, մեծ իմաստ տալով Հոգեգալստյան տոնի պատրաստությանը, պահեցողությամբ և աղոթքով է դիմավորում այն, քանի որ երբ Տերը մկրտվեց, Հոգին Նրան տարավ անապատ, և այնտեղ Տերը քառասուն օր ու քառասուն գիշեր պահքի մեջ էր: Երրորդն Աստծո խոսքին ականջալուր լինելն և այն սրտում փայփայելով պահելն է: Սուրբ Գիրքն ահարկու զորությամբ է ազդում մարդկանց հոգիների վրա, քանի որ «կենդանի է Աստծու խոսքը, ազդու և ավելի հատու, քան որևէ երկսայրի սուր, այն թափանցում է մարդու շնչի ու հոգու մեջ, մինչև ողնածուծը և քննում է մտածումներն ու սրտի խորհուրդները» (Եբր. Դ 12): Չորրորդը հուսալիր սպասում է, որ Աստված կգործի մեր մեջ և կտարածի Իր փառքը: Մեր օրերում, երբ կյանքում ինչ-որ բան սխալ է ընթանում, մենք ինքնաբերաբար հակված ենք մեղադրել Աստծուն՝ մոռանալով, որ Աստված կարող է օգտագործել այն բաները, որոնք այնքան մերժելի են մեզ համար և բարին դարձնել մեզ: Հինգերորդն Աստծո մխիթարիչ ուժը ստացող ժողովրդի քարոզչությունն է: Յուրաքանչյուր հավատացյալ՝ որպես մի մասնիկ Եկեղեցու, հարկ է, որ սերմանի Աստծու պատվիրաններն ամենուր: Ինչպես Պետրոս առաքյալը քարոզեց Հոգեգալստյան օրը, և ոմանք, «հոժարությամբ ընդունելով նրա խոսքը, մկրտվեցին, և այն օրը նրանք մոտ երեք հազար հոգով ավելացան» (Գործք Բ 41): Ահավասիկ սրանք են այն փրկության փարոսները, որոնց առկայությամբ Տիրոջ ժողովուրդն ընդունեց Երկնավորի Հոգու զանազան շնորհները:

Այսօր էլ Սուրբ Հոգին, լինելով հրեղեն լեզուներ սփռող, սրբացնում է մեզ՝ այրելով սեփական մեղքերն ու անբարո ցանկությունները: Հոգեգալուստն այն օրն է, երբ Աստծո կրակը նվիրագործում է յուրաքանչյուրիս: Այն օրն է, երբ Աստծո քամին թարմությամբ փչում է մեր սրտերում և հոգիներում: Այս սրբազան տոնը մոտ երկու հազար տարի առաջ եղավ ու չվերջացավ: Մեզ՝ քրիստոնյաներիս համար Նրա գալուստը կարող է լինել ամեն րոպե, ամեն ժամ ու ամեն օր, եթե մենք մեր սրտերն ու հոգիները պատրաստենք՝ Աստծու Հոգու անսպառ շնորհները որդեգրելու համար: Հոգեգալստյան տոնն ամեն տարի մշտամնա հնարավորություն է ընձեռում մեզ՝ հավատացյալներիս, Քրիստոսի աշակերտների օրինակով մեկտեղվելու և վերստին Սբ. Հոգու կրակով այրվելով՝ հալածելու անգիտության խավարը և լցվելու Քրիստոսի ջերմ սիրով, որով երկնային Տիրոջը կօրհներգեն բոլոր լեզուները: «Հորից ուղարկված աղավնին (Սուրբ Հոգին), մեծաձայն հնչումով լույսի փայլատակման նմանությամբ բարձունքից իջնելով, անկիզելի կրակով զինեց աշակերտներին, երբ նրանք Վերնատան մեջ նստած էին: Աննյութական աղավնի, ինքը անքննելի, որ Աստծու խորհուրդներն է քննում և Հորից վերցնելով՝ հիշեցնում է մեզ ահավոր երկրորդ գայստյան մասին. Հոգու համար մեզ քարոզեցին, թե Նա Համագոյ է Հորը և Որդուն: Օրհնություն բարձունքներում Հորից բխող Սուրբ Հոգուն, որի անմահական բաժակով առաքյալները հարբեցին և երկրին երկինք հրավիրեցին»:

Ելենա ԱՂԱԽԱՆՅԱՆ
Հայկ սրկ. ՍԱՐԳՍՅԱՆ

Աստուածաշունչ՝ գիրք գրոց



....Ահաւասիկ դուք այսօր պատերազմի էք ելնում ձեր թշնամիների դէմ: Ձեր սրտերը թող չթուլանան, մի՛ վախեցէք, մի՛ կարհուրէք ու նրանցից խոյս մի՛ տուէք, որովհետև մեր Տէր Աստուածը ձեզ հետ գնում է ձեր առջևից, որպէսզի ձեզ հետ պատերազմելով ձեր թշնամիների դէմ փրկի ձեզ:

Երկրորդ օրէնք, 20:3-4

ՏՕՆՔ ԵՒ ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ

ՅՈՒՆԻՍ

† Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ ելն ի վիրապէն — *յունիս 1*

† Տօն Կաթուղիկէ Ս. Էջմիածնի — *յունիս 2*

† Բարեկենդան Ս. Գրիգոր Լուսաւորչի պահոց — *յունիս 9*

† Գիւտ նշխարաց Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ — *յունիս 15*

† Սրբոց թարգմանչաց հարցն մերոց Սահակայ եւ Մեսրովբայ — *յունիս 20*

† Բարեկենդան Վարդավառի պահոց — *յունիս 30*

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝
Նարինե Հովհաննիսյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հեռախոս՝ (010) 517 280
Էլ. փոստ՝
qristonyahayastan1@gmail.com
qristhay@etchmiadzin.am
web կայք՝
krishayas.wordpress.com
etchmiadzinlibrary.am/en/kristonya-hayastan
Ստոր. տպագր. 3.06.2024 թ.
Տպաքանակը՝ 1265